

ԼՈՒՍԱՓԱՆ

1976

ԺԲ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Յուշագրական

ՓՈԽԱՆ ԳՐԱԽՈՍԱԿԱՆԻ

ՆԱԽԱԲԱՆ

1975 թվականին Վենետիկի սուրբ Ղազար վանքի տպարանից լույս է տեսել Կարապետ եպիսկոպոս Ամատունու «Ոսկան վարդապետ Երևանցի և իր ժամանակը» խորագրով գիրքը, որպես «Բազմավէպ» հայագիտական մատենաշարի իններորդ հրատարակություն, որը վերջերս ստացվեց Մայր Աթոռում:

Գիրքը բաղկացած է 11 գլուխներից և ունի 351 էջ:

1966 թվականին Ամենայն Հայոց Հայրապետի մարտ 11 թվակիր սրբատառ կոնդակի հրահանգով նշվում էր Մայր Աթոռի միաբան Ոսկան վարդապետ Երևանցու ջանքերով և Հակոբ Դ լուսամիտ ու հայրենասեր կաթողիկոսի օրհնությամբ Ամստերդամում լույս տեսած առաջին հայերեն Աստվածաշնչի հրատարակության 300-ամյակը: Տպագրված առաջին հայ Աստվածաշունչը մեր տպագրության պատմության մեջ ծանոթ է **Ոսկանյան Աստվածաշունչ** անունով:

Հայոց Հայրապետն Իր սրբատառ կոնդակում հանգամանորեն վեր էր հանում կատարված **«ճշմարտապես հերոսական գործի»** հոգևոր ու մշակութային նշանակությունը, գործ, որը կատարվում էր **«մեր պատմության ամենածանր շրջաններեն մեկուն մեջ, մայր երկրեն շատ հեռու, անհաղթահարելի ծանր պայմաններու տակ, անհոգնաբեկ եռանդովը և զարմանալի նվիրումովը լուսամիտ վարդապետի մը»**, վարդապետ, որն իր հոգում կրում էր **«սուրբ Մեսրոպ Մաշտոցի հանճարեն ճառագայթ մը»**[1]:

Հայոց Հայրապետն Իր սույն կոնդակում երախտագիտությամբ հիշում էր նաև Աստվածաշնչի տպագրության գործը ծրագրող և քաջալերող **«սուրբ Սահակ Հայրապետի տեսիլքով ներշնչված»** Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի անունը. **«Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը և Ոսկան վարդապետ Երևանցին, իրենց կոթողական գործով, կդասվին մեր ժողովուրդի լուսավորիչ-**

---

[1] «Էջմիածին» ամսագիր, 1966, № Գ, էջ 3—4:

ներու շարքին և հավետ պիտի հիշվին երախտագիտությամբ և օրհնությամբ», որովհետև նրանք իրենց անմահ գործով **«արև ծաթեցուցին 17-րդ դարու հայոց մթագնած երկնակամարին վրա և Աստուծո Խոսքին լույսը լայն սփռեցին հոգիներեն ներս»:**

Հայ մամուլը, արձագանքելով Հայոց Հայրապետի վերոհիշյալ հրահանգին, բացառիկ համարների լույս ընծայումով լայնորեն նշեց հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչի հրատարակության 300-ամյակը՝ ըստ ամենայնի արժևորելով միաժամանակ այդ կոթողական գործը գլուխ բերող մեծ հոգևորականի անձը: «Էջմիածին» ամսագրի բացառիկը (1966, № № ԺԱ—ԺԲ, **242 մեծադիր էջ)** ամենայն կարևորությամբ գիտական լուրջ ուսումնասիրությունների առարկա էր դարձրել Ոսկան վարդապետ Երևանցու անձն ու գործը, նրա մատենագրական և հրատարակչական ողջ վաստակը բոլոր բնագավառներում՝ հայ բարձրաստիճան հոգևորականների, հայրենաբնակ և սփյուռքահայ վաստակաշատ գիտնականների աշխատակցությամբ:

ԱՄԱՏՈՒՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԳԻՐՔԸ

Ամեն ինչ ասվել էր այս առթիվ սպառիչ կերպով Ոսկան Երևանցու **անձի և գործի** կարևորության մասին: Բայց ահա, հոբելյանական հանդիսություններից տասը տարի հետո, Կարսպետ եպիսկոպոս Ամատունին հրապարակ է իջել՝ իր վերոհիշյալ աշխատությամբ «հայտնաբերելու» համար պատմության և հրատարակությունների «հիշատակարաններու խուսափուկ ակնարկներու ընդմեջեն գործողը», որն իբր թե «մնաց ամոթխած հարսի նման նոսր մշուշի շղարշին ետև»[2]:

Ամատունին իր աշխատության մեջ ջանացել է Հռոմի եկեղեցական դիվաններից քաղված միակողմանի աղբյուրների հիման վրա պատռել «ամոթխած հարսի նոսր մշուշի շղարշը» և Ոսկան վարդապետին հանդես բերել ոչ ավելի, ոչ պակաս, քան որպես կաթոլիկ դավանությունն ընդունած վարդապետի: Ամատունու ամբողջ աշխատությունը շարադրվել է այս ոգով և նեղմիտ մտայնությամբ: Այդ ձգտումը կարմիր թելի նման անցնում է ամբողջ աշխատության միջով:

Զբավարարվելով այսքանով, Ամատունի եպիսկոպոսը փորձում է նաև Ոսկան վարդապետ Երևանցու ժամանակակից, մեր եկեղեցու ինքնուրույնության ու ուղղափառության քաջակորով պաշտպան երեք Հայրապետներին՝ Մովսես Գ Տաթևացուն (1629—1633), Փիլիպոս Ա Աղբակեցուն (1633—1655) և Հակոբ Դ Ջուղայեցուն (1655—1680) հանդես բերել որպես Հռոմի Աթոռի գերագահությունը և կաթոլիկ դավանությունն ընդունած կաթողիկոսների՝ վկայակոչելով այդ ժամանակաշրջանում Հռոմի Պապերի և Հայոց երեք Հայրապետների միջև փոխանակված նամակները՝ դիտումնավոր, ոչ ճիշտ և միակողմանի մեկնաբանություններով:

Այսպես՝ Ամատունին ներկայացնում է «Ոսկան վարդապետին» որպես «հարազատ զավակ Հայաստանյայց եկեղեցվո, հետևող մեր սուրբ թարգմանիչներու հույլին», որ «սակայն իր երիտասարդ հասակեն հաղորդակցության մեջ մտած էր կաթողիկե եկեղեցվո հետ, որուն օրինավոր Գլուխը ճանչցած էր Հռոմի եպիսկոպոսներուն մեջ»: Ոսկան վարդապետը «վճիտ կեցվածք ունեցած է հանդեպ կաթողիկե եկեղեցիին կեդրոնին՝ Հռոմի»[3]:

---

[2] Տես վերոհիշյալ աշխատությունը, «Ցառաջաբան», էջ 6:
[3] Տես հիշյալ աշխատությունը, էջ 216 և 187:

Հակառակ որ ո՛չ ժամանակն է և ո՛չ էլ տեղը, մանավանդ մեր օրերին, բյուզանդական ավելորդ և ժամանակավրեպ վեճերի մեջ մտնելու պատմական ստույգ փաստերի մասին, փաստեր, որոնք հերքվելու կարիքն իսկ չունեն, որովհետև ծանոթ են յուրաքանչյուր ողջամիտ, ոչ կանխակալ կարծիքներով առաջնորդվող մտավորականի, սակայն խմբագրությունս անհրաժեշտ է համարում կրկին անդրադառնալ մի շարք իրողությունների, որպեսզի մեր հավատացյալ ժողովուրդը զգոն ու աչալուրջ գտնվի նման տխուր երևույթների առաջ:

Նախ այստեղ ցավով պետք է արձանագրենք այն հանգամանքը, որ հայ կաթոլիկ որոշ հոգևորականներ առիթը չեն փախցնում համազգային մեծ իրադարձությունների և հոբելյանների առիթով պղտորելու հայ ժողովրդի ուրախությունն ու մխիթարությունը, նրա հայրենական և եկեղեցասիրական ապրումները, ինչպես այդ եղավ ներգաղթի խանդավառ օրերին կարդինալ Աղաջանյանի «Հովվական թուղթ»-ի հրատարակումով, որով նա դեմ էր դուրս գալիս ներգաղթի հայրենասիրական շարժմանը, ինչպես նաև տխրահռչակ Սահակ եպիսկոպոս Կոգյանի «Հայոց եկեղեցին» աշխատության լույսընծայումով, որով նա թունալից ոգով փորձում էր սևացնել պայծառ հիշատակը Օրմանյան սրբազան պատրիարքի, և այժմ էլ Ամատունի եպիսկոպոսի վերոհիշյալ աշխատությամբ: Հայ կաթոլիկ հոգևորականների այդ աշխատությունների մեջ հազար անգամ հեղհեղված միշտ նույն հանկերգն է՝ ուղղված բովանդակ հայությանը՝ դառնալու «նախնյաց ամբողջական լույս հավատքին (իմա՛ կաթոլիկ դավանության) կաթողիկե միության մեջ»:

Հայ կաթոլիկ մոլեռանդ ու նեղմիտ մի շարք հոգևորականների մեթոդն է՝ կեղծել պատմական փաստերը, դիտումնավոր կերպով «նույնիսկ թույլ տալ ինքզինքին՝ սրբագրելու և ի հարկին ձևազեղծելու Ավետարանի և մեր սրբազան հայրերու արտահայտությունները... ի փառս հռոմեական եկեղեցվո. ի վերջո նպատակը պետք է արդարացնե միջոցը»[4]:

Հայ կաթոլիկ հոգևորականների անխիղճ և վիրավորական հարձակումները հայ եկեղեցու դեմ ու նրանց «միության» կոչերը երբեք էլ ճշմարիտ արտահայտությունները չեն քրիստոնեական եղբայրության և սիրո աստվածատուր պատգամների, այլ կմիտին միմիայն պառակտումի, բաժանումների որոմ ցանել միևնույն ժողովրդի զավակների միջև: Բայց դժվար է «ընդդէմ խթանի աքացել»[5]:

Պարտավոր ենք կրկնել այստեղ, հանուն պատմական ճշմարտության, մի շարք իրողություններ, որոնք «հայ ժողովուրդի մեծ և սրբազան անցյալին կպատկանին»[6]:

Ոսկան վարդապետ Երևանցու՝ կաթոլիկ դավանություն ընդունած լինելու մասին Ամատունու գրքում առաջ բերված «պատմական» փաստերը,

---

[4] **Եղիշե վարդապետ Տերտերյան,** Ակամա անդրադարձությունք, տ. Գրիգոր Պետրոս ԺԵ Աղաճանյան կարդինալին իր «Հովվական թուղթ»-երուն առիթով, տպարան սրբոց Հակոբյանց, Երուսաղեմ, 1950 թ., էջ 5: Այս մասին տես նաև «Վնասաբեր մի գիրք» գրախոսականը Կոգյանի «Հայոց եկեղեցին» աշխատության մասին, «Էջմիածին» ամսագիր, 1962, № Դ, էջ 56—63: Տես նաև Դերենիկ եպիսկոպոսի «Թուղթ հերքման» աշխատությունը (1951 թ., Ստամբուլ) կարդինալ Աղաջանյանի «Հովվական թուղթ»-ին որպես պատասխան: Այս աշխատությունները հագեցված են պատմական ստույգ փաստերով և հերքում են հայ առաքելական եկեղեցու հակառակորդների չարամիտ ամբաստանությունները:

[5] Գործք ԻԶ 14:

[6] **Եղիշե վարդապետ Տերտերյան,** անդ, էջ 7:

ինչպես նշեցինք վերևում, քաղված են այդ ժամանակաշրջանում Հայաստանում կաթոլիկ պրոպագանդայով զբաղվող միսիոնարների նամակներից և վկայություններից: Ժամանակի պատմական աղբյուրները՝ Առաքել վարդապետ Դավրիժեցին[7] և ապա Խաչատուր վարդապետ Ջուղայեցին[8], մեծ գովեստով են խոսում Ոսկան Երևանցու մասին, բայց որևէ ակնարկություն չունեն նրա՝ կաթոլիկ դավանությունն ընդունած լինելու վերաբերյալ:

Իսկ Ամստուրդի եպիսկոպոսի գրքում նշված կցկտուր վկայությունները, նույնիսկ Ոսկան Երևանցու արտահայտությունները, ունեն իրենց հասկանալի բացատրությունները, ինչպես այդ մասին ապստիչ կերպով նշում է Օրմանյան սրբազանը. **«Դրամական նեղությանց հետ, Հռոմե հրամայված գրաքննական դժվարություններն ալ ավելցան Ոսկանի վրա, որոնք սաստկացան Փիթուի գրգռությամբ... Ոսկան յուր տպագրական անզուսպ փափաքը լրացնելու համար հանձնառու եղավ գրաքննական խստությանց ենթարկվիլ և մինչև իսկ հավատո դավանություն ստորագրել հռոմեական վարդապետության համաձայն... Անոնք երբեք Ոսկանի միտքին հայտարարությունները չեղան, այլ բռնադատյալ համակերպություններ»**[9]:

Կա դեռ ավելին. Ոսկանն այդ ծանր պայմանների մեջ 1669 թվականին քաջություն ու հայրենասիրական համարձակություն է ունեցել հրատարակելու Դավրիժեցու պատմությունը, որի մեջ **«հռոմեականներու ճիգերը և հատկապես Լեհաստանի և Նիկոլի գործերը ուժգին ձաղկված էին»**[10]:

Հռոմի հավատաքննության ժողովն այդ տարիներին Ոսկանին մեղադրում էր նաև հայ եկեղեցուն վերաբերող «հերետիկոսական գրքեր» հրատարակելու մեջ, բռնագրավում էր նրա հրատարակած Աստվածաշնչից բազում օրինակներ, երկար ժամանակ արգելում էր նրան մատուցել հայաձեւ ս. պատարագ՝ «հավատո կաթողիկե դավանությունը» (էջ 185) դեռ չընդունած և միայն «միսիոնարներու կողմե սրբագրված Խորհրդատետրին օրինակին վրայեն» (էջ 195), և ամեն առիթով նրանից պահանջում նորանոր հավատո դավանության գրեր, իրավամբ կասկածելով Ոսկանի արած բռնադատյալ հայտարարությունների վրա: Ոսկանն ապրում էր «զրկված իր գրքերեն, ճնշված պարտքերու տակ և ստիպված գրավի տակ դնելու եպիսկոպոսական իր զգեստները»[11]:

Բոլոր այս տխուր փաստերը, Ոսկանի կրած զրկանքներն ու տառապանքները մի շարք հայ կաթոլիկ հոգևորականներից (էջ 243), պայծառ ապացույցն են այն բանի, որ Օրմանյան սրբազանի եզրակացությունները միանգամայն ճիշտ են, այսինքն այն, որ Ոսկան վարդապետի՝ կաթոլիկ դավանություն ընդունելը **«Ոսկանի միտքին հայտարարությունները չեն»**, այլ **«պատահաբար և բռնադատյալ առ երեսս» մի համակերպություն**

---

[7] **Առաքել վարդապետ Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց...: Ամստերդամ, 1669, գլուխ ԾԷ և ԾԸ, «Պատմութիւն կենաց Ոսկանայ վարդապետի Երևանցւոյ տպագրողի գրոյս և այլոց»:

[8] **Խաչատուր վարդապետ Ջուղայեցի**, Պատմություն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 122:

[9] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2543:

[10] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, անդ, էջ 2543: Այս մասին տես նաև «Բոնի միություն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցվույն Հռոմա, թարգմ. և հրատ. Կարապետ Եղյանց, Պետերբուրգ, 1884, էջ ԿԸ—279:

[11] **Հայր Պ. Անանյան**, Ոսկան վարդապետի նամականին, «Բազմավէպ», 1966, № 11—12, էջ 299—300:

«և ո՛չ ավելի, և այն ալ տպագրական ծեռնարկը չխափանելու և չխանգարելու համար»[12]:

Բացի այդ, երբ 1674 թվականի փետրվարի 14-ին Մարսելում մահանում էր Ոսկան վարդապետը, նրա վրա կաթոլիկ արքեպիսկոպոսի կողմից դրված շիրմաքարի արձանագրության մեջ ոչ մի ակնարկություն չկա Ոսկանի կաթոլիկ լինելու մասին: Արձանագրության մեջ Ոսկանը հիշատակվում է որպես «սուրբ Սարգիս վանքի արքեպիսկոպոս, Պարսկաստանի թագավորության Արարատյան նահանգից, հայ, երկու տարուց ի վեր բնակիչ այս քաղաքի, ուր նա տպագրում էր հայերեն լեզվով բարեպաշտական գրքեր՝ ուղարկելու համար Պարսկաստանի և Հայաստանի երկրները: Նա միշտ եղել է ճշմարիտ և բարի **ծառա Աստուծո**, հույժ բարեպաշտ և անձնազոհ»[13]: Արձանագրության մեջ Ոսկան վարդապետը բնութագրվում է արդարորեն **ծառա Աստուծո** և ոչ թե ծառա Հռոմի, որպիսին Ամատունի եպիսկոպոսը ճգնում է ներկայացնել նրան: Տապանաքարի այս արձանագրությունն ինքնին «հերքում մըն է Ամատունու փաստարկության»: Իսկ Ոսկանի թաղման մեծ շուքով կատարումը երբեք էլ փաստարկ չէ Ամատունու տեսության ի նպաստ, այլ հարգանքի բնական մի տուրք հանդեպ «բարեպաշտ և երկյուղած» մի հայ հոգևորականի, որի քրիստոնեական հրատարակչական գործունեությանը մոտիկից ծանոթ էին տեղի կաթոլիկ հոգևորականները, և որը հեռավոր Հայաստանից այդ քաղաքն ընկած՝ աշխատում էր իր Մայր եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր, մշակութային լուսավորության, Քրիստոսի Ավետարանի փառքի համար:

Մի պահ համաձայնենք, թե Ոսկան վարդապետն ընդունել է կաթոլիկ եկեղեցու դավանությունը: Դա՞ է միթե էականը Ոսկան վարդապետի գործունեության մեջ: **Ժամանա՞կն է այսօր, էկումենիկ շարժման այս օրերին, «չարչարել պատմության փաստերը» և «պատմագիտական շինիչ աշխատանք մը»**[14] **կատարելու փոխարեն հայ և կաթոլիկ եկեղեցիների համագործակցության և ի Քրիստոս սիրո, եղբայրական հարաբերությունների մեջ սեպ խրել՝ խանգարել փորձելով նրանց միջև հաստատված և օրավուր զարգացող սրտագին կապերը:** Ցավալի է, շատ ցավալի, որ Ամատունին և նրա նմանները լավ չեն սերտել պատմության դասերը և շարունակում են ընթանալ իրենց «տնաքանդ քննադատությամբ՝ հին ըմբռնումներով», մարդիկ, որոնք «յամենայն ժամ ուսանին և երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանին»[15]: Դժբախտություն է արձանագրել, որ հայ կաթոլիկ մի շարք հոգևորականներ, լինեն նրանք Հացունի, Աղաջանյան, Կոգյան թե Ամատունի, առաջնորդվում են «իրենց կիրքերով և շահերով, և միևնույն են ամեն դարու մեջ և ամեն տեղ»[16]: Նրանք մեր օրերի Նիկոլ Թորոսովիչներն են:

---

[12] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, անդ, էջ 2545:

[13] Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի ինքներորդ ուղևորությունը, 1971, Մայր Աթոռ ս. Էջմիածին, էջ 198:

[14] **Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյան**, Հայ եկեղեցի, Երուսաղեմ, 1930, էջ 180 և 245:

[15] Բ. Տիմոթեոս Գ. 7:

[16] **Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյան**, անդ, էջ 181:

Դեռևս 1775 թվականին Մայր Աթոռի տպարանում իր հրատարակած երկու հատոր «Տօնացոյց»-ի առաջաբանում Սիմեոն Երևանցի կաթողիկոսը (1763—1780) գրում էր հայ կաթոլիկ հոգևորականների մասին. «Գոլով ի բնէ յազգէս և յեկեղեցւոյս մերմէ ոչ այլով իւիք դրդմամբ, եթէ ոչ միայն վասն մարմնական հեշտութեան և անսանձ որկրամոլութեան իւրեանց, ուրացեալք զեկեղեցիս և զազգս մեր՝ յորս ծնեալք և սնեալք են, յարին յայլ ազգս քրիստոնէից»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՀՌՈՄԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Ամատունի եպիսկոպոսն իր գրքի մեջ լայն տեղ է հատկացրել նաև Ոսկան վարդապետ Երևանցու ժամանակակից Հայոց երեք Հայրապետների գործունեությանը՝ իրեն ծանոթ մեթոդի համաձայն փորձելով ապացուցել, որ նրանք ևս իբր թե հետևել են Ոսկան Երևանցու «խոհական ուղեգիծին»: Ամատունին այս առթիվ հրատարակել է Հայոց երեք կաթողիկոսների և Հռոմի Ուրբանոս Ը, Ալեքսանդր Է և Կղեմես Թ Պապերի միջև փոխանակված նամակները:

Մովսես Գ Տաթևացու՝ Ուրբանոս Ը Պապին ուղղած նամակներից առաջինը, որը կրում է 1626 օգոստոս 27 թվականը, գրված է նրա կաթողիկոս լինելուց առաջ: Նամակում Տաթևացին խոսում է քրիստոնեական սիրո մասին՝ շեշտելով, որ **«ամենեքեան անդամք եմք միմեանց, յաւդեալ և պատշաճեալ ի Գլուխն Քրիստոս, պարտիմք միմեանց խնդակից և ցաւակից լինել»:** Տաթևացին, շոշափելով նաև դավանական տարբերությունները, որոնք գոյություն ունեին երկու եկեղեցիների միջև, գրում է Պապին. **«Ո՛չ եթէ հերէտիկոս եմք մեք կամ հերձուածող, որպէս կարծէք դուք, այլ ուղղափառ եմք, ըստ դաւանութեան հոգևոր հարցն մերոց»:** Ուրեմն Տաթևացին հաստատ է հայ եկեղեցու հայրերի ուղղափառ դավանության վրա, բայց մի շարք գործնական նպատակներով անհրաժեշտ է համարել Հռոմի եկեղեցու հետ հոգևոր շփման մեջ մտնել, այն էլ հանուն քրիստոնեական սիրո՝ շեշտելով, ըստ Պողոս առաքյալի, որ **«մեք զհետ երթիցուք սիրոյ, զի սէր երկայնամիտ է, քաղցրանայ, ոչ ամբարտաւանի»:** Իր նամակում Տաթևացին գրում է, որ երբ հայ հոգևորականներ և աշխարհականներ ուխտով և կամ վանառականության նպատակով Հռոմ են գնում, կաթոլիկները բռնադատում են նրանց, թե **«նզովեա զքո Հայրապետն և դաւանեա զմեր դաւանութիւնն, և վասն այսմ պատճառի տմարդի և հակառակասէր համբաւի անուն ձեր»:** Տաթևացին այս առթիվ խնդրում է Պապին. **«Մի՛ ևս առնել զայսպիսի սովորութիւն»,** և նամակն ավարտում է բարեմաղթություններով:

Տաթևացու սույն նամակն իրոք որ, ինչպես նշում է Ամատունին էլ իր գրքում, «դավանական հստակ բանաձևումով և քրիստոնեական սիրո օծությամբ լեցուն թուղթ մըն է», որի մեջ, սակայն, կաթոլիկ դավանությանը հարած լինելու նշույլ իսկ չկա:

Տաթևացին իր երկրորդ նամակը գրել է Ուրբանոս Ը Պապին 1632 թվականի օգոստոսի 19-ին, երբ արդեն կաթողիկոս էր: Նամակում Հայոց կաթողիկոսը տխրությամբ խոսում է, որ հայ ժողովուրդը տառապում է Արևելքում երկու մահմեդական պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի բռնությունների և լծի տակ, իր հոտը ցրված է աշխարհով մեկ և այդ առթիվ վերջում շեշտում է մանավանդ Լեհաստանի հայ թեմի տխուր վիճակը ի հետևանս Նիկոլ Թորոսովիչ չեպիսկոպոսի դավաճանական արարքների և խնդրում, որ Պապը սանձահարի կաթոլիկ հոգևորականների կատարած ավերածությունները այնտեղ՝ միջնորդելով լեհ թագավորին, որ կաթոլիկների կողմից հափշտակված տեղի հայկական եկեղեցիները վերադարձվեն իրենց օրինավոր տիրոջը՝ սուրբ Էջմիածնին հավատարիմ հայ հավատացյալ ժողովրդին:

Տաթևացու նամակների մեջ կան իհարկե հարգամեծար արտահայտություններ՝ ուղղված Ուրբանոս Ը Պապին. **«Բայց,**—գրում է Օրմանյան սրբազանը,—**իրարմե շատ տարբեր բաներ են, նամակի մը մեջ շարադրված քաղաքավարի բացատրություններ և հավատո պաշտոնական դավանություններ:**

Մովսես յուր հայադավան եկեղեցվո դրությունը բարձրացնելու և պայծառացնելու աշխատող մը, երբեք զայն ուրանալու կամ փոփոխելու միտք չէ ունեցած, այլ եղած է միշտ ինչ որ էր, հայադավան եկեղեցվո հավատարիմ ախոյան: Բայց կրցավ լատին աշխարհին բարյացակամությունը փնտրել թե՛ իր դիրքին ուժ մը գտնելու հույսով և թե՛ Եվրոպայի մեջ եղող հայ գաղութներուն դիրքը պաշտպանելու համար»[17]:

Ամեն ինչ այստեղ ասվել է պարզ և սպառիչ, օրմանյանական խորաթափանցությամբ և կուռ տրամաբանությամբ:

Ամատունու գրքի հավելվածում հրատարակված են Ուրբանոս Ը Պապի և Փիլիպոս Աղբակեցի Հայոց կաթողիկոսի միջև փոխանակված նամակները, ինչպես նաև Փիլիպոս կաթողիկոսի «Թուղթ դավանական»-ը, որն ուղարկված է Լեհաստանի Վլադիսլավ Դ թագավորին:

Ինչպես Տաթևացու, այնպես էլ Փիլիպոս Աղբակեցու վերոհիշյալ նամակի և դավանական թղթի մեջ ևս տիրում է նույն ոգին, ինչ որ տեսնում ենք Տաթևացու մոտ: Փիլիպոս կաթողիկոսը ևս իր նամակների մեջ հանգամանորեն խոսում է քրիստոնեական եկեղեցիների միջև ավետարանական սիրո վրա հաստատված եղբայրական հարաբերությունների մասին, տալիս հայ եկեղեցու ուղղափառ դավանությունն աստվածաբանական և քրիստոսաբանական հարցերի մեջ ու ապա արդարորեն քննադատում Լեհաստանի հայ գաղութի ծոցում Նիկոլ Թորոսովիչի դատապարտելի արարքների հետևանքով ստեղծված եկեղեցական-ազգային երկփեղկումը՝ ընդգծելով, որ Նիկոլը արժանի է եկեղեցական պատժի և ոչ թե վարձատրության: Նա պահանջում է, որ Լվովի եկեղեցիների հոգաբարձությունը և մատակարարությունը վերադարձվի հավատացյալ հայ ժողովրդի ձեռքը:

Փիլիպոսի օրով հայ-կաթոլիկ եկեղեցական հարաբերությունների մեջ որոշ դեր է փորձում կատարել Նախիջևանի կաթոլիկ արքեպ. և միսիոնար հայր Պողոս Պիրոմալլին, որը լայնախոհ Հայոց կաթողիկոսի կողմից հրավիրվել էր ս. Էջմիածին որպես ուսուցիչ, բայց ավելի շատ զբաղվում էր Մայր Աթոռն ու միաբանությունը կաթոլիկացնելու տխուր ու դատապարտելի աշխատանքով*: Պիրոմալլին 1645-ին գրում էր Հռոմ. «Իմ կողմես մեծ համբերության պետք կա: Իսկ Ձեր կողմեն հարկ է քաջալերել կաթողիկոսը՝ վերադարձնելով (ժողովուրդին) գոնե մեկը՝ Լվովի եկեղեցիներեն» (էջ 110):

Պիրոմալլին ապա վերոհիշյալ զեկուցագրում «վհատ շեշտով» ավելացնում էր հայ ժողովրդի ծոցում և Մայր Աթոռում իր կատարած միսիոնարական աշխատանքների ձախողության մասին. «Այս կաթողիկոսեն ոչինչ հուսալի է... անհավատներու տիրապետությունը, տգետներու համառությունը, և ամոթը... թույլ պիտի չտան այս ազգին վերադարձը դեպի եկեղեցական հաղորդակցություն, եթե ոչ **զորեղ ձեռքով**» (էջ 115):

Հռոմ ուղարկված 1646 թվակիր այլ պաշտոնական մի գրությամբ հաղորդվում է, որ «հայր Պիրոմալլիի միաբանական ջանքերը ի դերև ելած էին: Նույնը կհաստատե Նախիջևանի հայալատին արքեպիսկոպոսը տեղի

---

[17] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, անդ, էջ 2410:

* «Պիրոմալլին Հռոմի մի քանի հանձնարարությունները կատարեց, Հայոց եկեղեցին լատինականի հետ միացնելու մասին: Նա կաթոլիկ միսիոնար էր, որի համար բոլոր ճշմարտություններից առաջ, մարդկային բոլոր շահերից բարձր Պապն էր կանգնած իր համաշխարհային տիրապետության գաղափարով» (Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, Երևան, 1946, էջ 327):

ունեցած բանակցություններու ելքի նկատմամբ»[18] հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև:

Մի բան պարզ է, որ Փիլիպոս կաթողիկոսի օրով էլ հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև չի վերահաստատված «երկու եկեղեցիներու միաբանությունը և եկեղեցական հաղորդակցությունը» հայր Պողոս Պիրոմալլիի ջանքերով[19]:

Այս բոլորից հետո երկու եկեղեցիների համագործակցության ջանքերի ձախողման բուն պատասխանատվությունն Ամատունին բարդում է հայ եկեղեցու վրա՝ մեղադրելով նրան. «Եթե կար աչքի զարնող կետ մը այդ դարուն՝ որ պարբերաբար հոս հոն կարատավորեր Հայաստանյայց եկեղեցվո համբավը, այդ ալ կխտանար իր հակաքաղկեդոնիկ դիրքին մեջ, փողահարված մանավանդ ինչ ինչ տաք շրջաններուն, իր պաշտամունքային կյանքին մեջ առհավական շեղումով»[20]:

Ամատունին այս առթիվ, քննադատելով հայ եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքը, կոկորդիլոսի արցունք է թափում, որ հայ եկեղեցին «տգիտորեն» նզովում է Լևոն Ա Պապին (440—460) և նրա տոմարը, մինչ անխառն հրճվանքով է արձանագրում կաթոլիկ միսիոնարների կատարած սրբապղծությունները, միսիոնարներ, որոնք իրենց ձեռքերը երկարում էին մեր եկեղեցու հայրերի և մանավանդ ս. Գրիգոր Տաթևացու դավանաբանական, պաշտամունքային-ծիսական գրքերի մեջ՝ դրանք «վերասրբագրելու» մոլուցքով տարված:

Ամատունու գրքի հավելվածում հրատարակվել են նաև Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի 1661 սեպտեմբեր 28 թվակիր նամակը՝ ուղղված Ալեքսանդր Է Պապին, ինչպես նաև Կղեմես Թ Պապին ուղղված նամակը՝ գրված 1673 թվականի հունվարի 29-ին:

Հիմնվելով վերոհիշյալ երկու նամակների վրա՝ Ամատունին նույն ոգով պնդում է, թե Հակոբ Ջուղայեցին ևս հավատո հարցի մեջ հետևում է Ոսկան վարդապետին: Ջուղայեցին, ինչպես վկայում է Դավրիժեցի պատմիչը, մի որոշ ժամանակ զգուշանում է Ոսկանից: Դավրիժեցին, սակայն, չի հիշում այդ վերապահության պատճառը[21]: Ամատունին իր գրքում (էջ 140) Դավրիժեցու այդ հաղորդածի մեջ տեսնում է «քողարկյալ ակնարկ մը» այն մասին, թե «կաթողիկոսին կեցվածքին մեջ ալ նոր ուղղություն մը տեղի ունեցած է եկեղեցական հաղորդակցության դեպի Հռոմի եպիսկոպոսը»:

Այժմ, սակայն, տեսնենք, թե ի՞նչ է ասում Ջուղայեցու՝ Ալեքսանդր Է Պապին գրած նամակը:

Աղբակեցու նման Ջուղայեցին էլ իր նամակում հարգամեծար մի շարք պաշտոնական խոսքերից հետո ծանրանում է հայ եկեղեցու և հայ ժողովրդի տխուր վիճակի վրա, որոնք ապրում են «ընդ իշխանութեամբ անողորմ բռնաւորաց և չար գազանաց», որ «եմք ի ներքոյ լծոյ այլազգեացն և ակն ունիմք թէ ոչ լիցի կոխան անուն Քրիստոսի ի մէջ թշնամեացն խաչին Քրիստոսի, այլ մանաւանդ բարձրասցի և մեք պարծեսցուք ի միասին հանդերձ ձեօք իբրև զանդամս Քրիստոսի»: Սակայն նա հույս է հայտնում, որ «անկեալ գոլով ի մէջ այսպիսի տառապանաց և ոչ գտանելով այլուստ մխիթարութիւն վշտաց մերոց, Ձերդ Սրբութեանդ յայտնեմք զնեղութիւնս մեր, թերևս

[18] **Կարապետ եպիսկոպոս Ամատունի**, նույն գիրքը, էջ 116:
[19] Անդ, էջ 117:
[20] Անդ, էջ 120—121:
[21] **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, ԾԷ գլուխ:

այսու լիցի դիւրութիւն սրտից մերոց և Դուք ցաւակից լինիք աղէտից մերոց... զի ոչ եմք օտարք, այլ եմք գինք արեան Քրիստոսի»:

Սույն նամակի մեջ Ջուղայեցին ցանկություն է հայտնում նաև անձամբ Հռոմ այցելել և տեսակցել Պապի հետ: Ինչպես երևում է նամակի բովանդակությունից, նրանում ոչ մի ակնարկություն չկա կաթոլիկ դավանություն ընդունելու մասին: Ջուղայեցու Եվրոպա գնալը և Պապի հետ տեսակցություն ցանկանալը քաղաքական նպատակ էր հետապնդում: Ջուղայեցին, որպես հայրենասեր կաթողիկոս, հանդիսանում է 17-րդ դարի հայ ազատագրական շարժման կազմակերպիչներից մեկը: **Հայ ժողովրդի կենաց և մահու օրերին, երբ նա օգնության մի ձեռք էր փնտրում Արևմուտքում մայր հայրենիքի ազգային-քաղաքական փրկության ի խնդիր, Ամատունին և նրա նմանները, կույր ձևանալով պատմական այս ճշմարտության առաջ, դրա մեջ ուզում են տեսնել իբր թե դավանափոխության տրամադրություններ: Սրանից ավելի ցայտուն ապացույց կարելի՞ է պատկերացնել Ամատունիների՝ պատմությունը նենգափոխելու դիտավորության և նրանց ապազգայնացած հոգեվիճակի:**

Ջուղայեցին 1679 թվականին իր նախագահությամբ գումարված Էջմիածնի գաղտնի ժողովից հետո, ի գլուխ եկեղեցական և իշխանական մի մեծ պատվիրակության, որի մեջ էր նաև Իսրայել Օրին, մեկնում է Կ. Պոլիս: Ութսունամյա կաթողիկոսը, սակայն, Կ. Պոլսում վախճանվում է 1680 թվականին և թաղվում այնտեղ: Պատվիրակությունը ձեռնունայն վերադառնում է Էջմիածին: Միայն Իսրայել Օրին է, որ անցնում է Եվրոպա՝ քաղաքական այդ ծրագիրը հետապնդելու համար:

Ըստ կաթոլիկ աղբյուրների, Ջուղայեցին Կ. Պոլսում, **իր մահից մեկ օր առաջ միայն,** իբր թե «ետ թղթով զդաւանութիւն ուղիղ հաւատոյ, ընդունելով ի նմին զամենայն զոր ընդունի հռոմէական սուրբ եկեղեցի»[22]:

Մեր ժամանակակից աղբյուրները **«այսպիսի բան մը տեղեկություն չունին... բացարձակապես կանգիտանան այսպիսի եղելություն մը, որ շատ կարևոր միջադեպ մը պետք էր կազմեր, եթե իրական ըլլար»,** ինչպես իրավամբ վկայում է Օրմանյան սրբազանը և ավելացնում. **«Ջուղայեցին օգտակար կդատեր Հռոմի հետ համաձայնություն մը, բայց ոչ երբեք կմտածեր հայ եկեղեցվո ինքնությունը ջնջել, հայ եկեղեցվո ազատությունը զոհել, հայ եկեղեցվո լայնախոհ սկզբունքները ուրանալ և հայ եկեղեցին Հռոմի եկեղեցվույն ստրկացնել: Նորա տեսությունը վեհ և բարձր էր, քրիստոնեական ուղղամիտ և անխարդախ միության գետին մը ստեղծել և անկե օգտվիլ յուր ազգին բարօրության և յուր եկեղեցվույն բարեկարգության համար»**[23]:

Ամատունին մեջբերում է նաև Ջուղայեցու երկրորդ նամակը՝ ուղղված Կղեմես Թ Պապին: Նամակը կրում է 1673 հունվար 29 թվականը, երբ մահացել էր Կղեմես Թ Պապը և նրան հաջորդել Կղեմես Ժ Պապը: Զարմանալի է, որ «կաթոլիկ դավանությունն ընդունած» Ջուղայեցի կաթողիկոսը Հռոմից տեղեկություն չի ստացել նախկին Պապի մահվան և նորի ընտրության մասին ու իր նամակն ուղարկում է Ոսկան Երևանցուն, Մարսել, որպեսզի վերջինս լրացնի «նամակընկալին անունը» և այն փոխանցի Հռոմ:

Սույն նամակը մի հանձնարարական է ի նպաստ Ոսկան վարդապետի, որպեսզի նրան հանձնվի լիվոռնաբնակ հայերի «առաջնորդական հոգը» և

---

[22] **Հ. Միքայէլ Չամչեան,** Պատմութիւն հայոց, Վենետիկ, հատոր Գ, էջ 719:

[23] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան,** Ազգապատում, հատոր Բ, էջ 2614—2618:

գրվի Ֆրանսիայի թագավորին, որ օժանդակի նյութական կարոտության մեջ գտնվող պանդուխտ հայ վարդապետին, որը Եվրոպա էր ուղարկված «գրքերու տպագրության համար, որպեսզի այն տեղերու մեջ ազգին պանդուխտներն ուղղե Տիրոջ պատվերին համաձայն և առաջնորդե զանոնք ըստ սուրբ Հայրապետներու կանոններուն և զանոնք դարձնե ի կատարումն Աստուծո կամքին»: Ամեն փոքրիշատե լրջամիտ ընթերցողի մտքում հարց է առաջանում, թե ինչո՞ւ Հայոց կաթողիկոսը հեռավոր Էջմիածնից Հռոմի Պապին պիտի դիմեր «կաթոլիկ դավանությունն ընդունած» Ոսկան վարդապետին հովանավորելու և նյութապես օգնելու համար:

Արդ, իզուր են Ամատունու ջանքերը Մովսես Տաթևացի, Փիլիպոս Աղբակեցի և Հակոբ Ջուղայեցի լուսամիտ ու հայրենասեր կաթողիկոսների գլուխները կաթոլիկ լուսապսակով զարդարելու: Առաքել Դավրիժեցին նշում է իր Պատմության մեջ, որ հայոց այս եռամեծ Հայրապետները «կսկծալի մորմոքմամբ սրտի, տեսանելով զաւեր Հայաստան աշխարհին, զնուազիլն մերոյս ազգին և զչարութիւն մահմեդականաց, զպակասիլն եկեղեցական կարգաց, զաւերն բարձրագահ և քրիստոսաբնակ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի, այլ և զնոցին նորոգութիւն և այլ բանքս պատմութեանց, ի գիրս յիշատակի, ի գիտութիւն յապա եկելոց»[24], հանդիսացան ԺԷ դարի Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Հայոց աշխարհի հոգևոր, մշակութային ու հայրենասիրական վերազարթոնքի քաջակորով ռահվիրաները:

Իսկ Օրմանյան սրբազանն արդարորեն հետևյալն է վկայում հայ եկեղեցու կողմից Մովսես Գ Տաթևացու գտած պատվի և հարգանքի մասին. «Այն բացառիկ և մեծագույն պատիվը զոր իրեն ըրած է և կընե հայ եկեղեցին, անոր անունը հիշելով հանապազոր պատարագի մեջ եռամեծ **հովվաց և հովվապետաց** կարգին, կցելով զայն ուրիշ լուսավոր անունի մը հետ, որ է Գրիգոր Տաթևացին»[25]:

Ամատունին իր գրքում լայն տեղ է հատկացրել նաև լեհահայոց թեմի «բռնի միության» հարցին կաթոլիկ եկեղեցու հետ: Լեհաստանի և Տրանսիլվանիայի թեմերի տխուր պատմությունը քաջ ծանոթ է յուրաքանչյուր հայ մարդու: Այսօր մեր տրամադրության տակ են գտնվում նաև արխիվային նոր փաստեր այդ տխուր իրադարձությունների մասին, որտեղ պայծառորեն նշվում են երբեմնի բարգավաճ, տիրախնամ լեհահայ թեմի արիությունը, հավատարմությունը Մայր Աթոռ ս. Էջմիածնին և նրա հերոսական պայքարը Նիկոլ Թորոսովիչի ու կաթոլիկ եկեղեցու արբանյակների դեմ:

Ցավալին և դատապարտելին այն է, որ Ամատունին անհեթեթ ու բրոնազբոսիկ մեկնություններով իր պաշտպանության տակ է առնում լեհահայ թեմի տխրահռչակ անցուդարձերի սև ասպետներին, որոնց ազգակործան և եկեղեցաքանդ արարքների պատճառով «հիշյալ թեմը կաթողիկե եկեղեցվո հաղորդակցության մեջ մտավ»: Ամատունին այդ հարցում թեև թվում է, թե դատապարտում է Նիկոլ Թորոսովիչին և նրա նմանների կատարած տխուր դերը՝ դրանում տեսնելով միայն տակտիկական մի սխալ, սակայն իրականում մի կենսունակ ու մի մեծ թեմ սուրբ Էջմիածնից բաժանելը և կաթոլիկացնելը համարում է «բարի շարժում, միաժամանակ սիրո գործ, համաձայն Քրիստոսի պատվերին»՝ նշելով, որ «հինգյան բարի շարժում մը, մասնիկ անդամին կողմե կկատարվեր այնպիսի եղանակով մը որ բունին ցնցում կպատ-

[24] **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, էջ 667—669:

[25] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, հատոր Բ, էջ 2422: Նաև «Ժամագիրք Հայաստանյայց եկեղեցվո», Կ. Պոլիս, 1874, էջ 650:

ճառեր: Կարելի էր և հարկ ալ էր որդեգրել այնպիսի ուղեգիծ՝ որով մասնիկ անդամին կամ ճյուղին հաղորդակցությունը Հռոմի եկեղեցիին հետ, բունին՝ այսինքն Հայաստանյայց եկեղեցվո ամբողջության վրա ցոլացներ սիրո ջերմությունը»[26]:

Կարծում ենք, մեկնություններն ավելորդ են: Այստեղ հստակ երևում է Ամատունու ողջ հակազգային հոգեբանությունը: «Ի բերանոյ քումմէ դատեցար, ծառայ չար և անհաւատ»[27]:

ՎԱՏԻԿԱՆԻ Բ ԺՈՂՈՎԻ ԴԻՐՔԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Յավալին և վրդովեցուցիչն այն չէ, որ Ամատունի եպիսկոպոսը փորձում է ամեն գնով կաթոլիկությանը հարած ցույց տալ Ոսկան վարդապետին, այլ մանավանդ այն, որ նա, օգտագործելով իր ուսումնասիրության առիթը, անհոգի կերպով մեղադրանքներ և վիրավորանքներ է տեղացնում Հայաստանյայց առաքելական եկեղեցու նվիրական ավանդությանց հավատարիմ մնացած հայ հոգևորականության և ողջ ժողովրդի հասցեին: Պարզ երևում է, թե հենց ա՛յս է եղել Ամատունի եպիսկոպոսի բուն նպատակը և ոչ թե ինչոր «պատմական ճշմարտություններ» երևան բերելը:

Քրիստոնեական հայտնությունների ճշմարտության հավատարիմ են մնացել Արևելյան պատմական եկեղեցիները, այդ թվում նաև հայ եկեղեցին: 1963—1965 թվականների Վատիկանի Բ ժողովում ընդունված վավերաթղթերում «Արևելյան հոգին և Արևելքի սեփական պատմությունը» ենթավերնագրի տակ պարզ ու հստակ արձանագրվել է հետևյալ ժողովական որոշումը.

«Երկար դարերու տևողությամբ, Արևելյան և Արևմտյան եկեղեցիները ընթացած են իրենց ուրույն ճամփաներեն, սակայն միացած մնալով իրարու՝ հավատքի և խորհուրդներու եղբայրական հաղորդակցությամբ... Պետք չէ մոռնալ նաև, որ Արևելյան եկեղեցիներն ունեցած են, սկիզբեն ի վեր, այնպիսի գանձ մը, որմե շատ բան փոխ առած է Արևմտյան եկեղեցին՝ ծեսի, հոգևորական ավանդության և իրավակարգի առնչությամբ: Ոչ ալ կարելի է թերագնահատել այն եղելությունը՝ որ քրիստոնեական կրոնքին դավանաբանական հիմնական ճշմարտությունները... սահմանված են Արևելքի մեջ գումարված Տիեզերական ժողովներե: Իսկ այս հավատքը պահպանելու համար՝ անոնք կրած են և կկրեն տակավին ծանր նեղություններ»[28]:

Արևելյան եկեղեցիների խմբում հայ եկեղեցին ևս հաստատ է մնացել և մնում է արևելյան երեք Տիեզերական ժողովների սահմանած աստվածաբանական և քրիստոսաբանական վարդապետության վրա: Այս հանգամանքը կազմում է հայ եկեղեցու «ինքնուրույնության պատմական մեծ գիծերեն մեկը՝ ամենեն հայեցի գիծը»[29]: Հայ եկեղեցին իր ողջ պատմության ընթացքում այս ոգով է առաջնորդված միշտ «և ոգևորված է մինչև հիմա, երբ այնքան անկեղծ սեր և հարաբերություն կմշակե բոլոր այն եկեղեցիներուն հետ, որոնք դավանակից և հավատակից են Նիկիո, Կ. Պոլսի և Եփե-

---

[26] **Կարապետ եպիսկոպոս Ամատունի**, անդ, էջ 218—219:

[27] Ղուկաս ԺԹ 22:

[28] Վավերաթուղթեր վատիկանյան Բ Տիեզերական ժողովի, սուրբ Ղազար, 1967, էջ 154—155:

[29] **Բաբգեն եպիսկոպոս Կյուլեսերյան**, անդ, էջ 166;

սուի ժողովներուն... Հայոց եկեղեցին իր առաքելական ծագումով այնչափ իրական է, որչափ Հռոմի և Հունաց եկեղեցիները»[30]:

1970 թվականի մայիսի 8—12-ը Հայոց Հայրապետի պաշտոնական այցելությունը Հռոմ՝ Պողոս Զ Սրբազան Պապի հրավերով, պատմական իրադարձություն էր երկու եկեղեցիների ժամանակակից հարաբերությունների պատմության մեջ:

Մայիսի 12-ին Վատիկանում երկու Հովվապետները ստորագրեցին համատեղ մի հայտարարություն, որով ցանկություն էր հայտնվում՝ որոնել համագործակցության նոր ճանապարհներ, համագործակցություն, որը պետք է հիմնված լիներ «քրիստոնեական հասարակաց հավատի և հասարակաց խորհրդական կյանքի փոխադարձ ճանաչման, անձանց և նրանց եկեղեցիների փոխադարձ հարգանքի վրա»[31]:

Բայց, հակառակ այս բոլորին, Ամատունի եպիսկոպոսն իր գրքով փաստորեն խոչընդոտում է այդ համագործակցությանը, ինչ որ դատապարտելի է և, վստահ ենք, թե մերժելի է նաև Հռոմի եկեղեցու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դժբախտաբար Ամատունի եպիսկոպոսն ու նրա նմանները երբեք չեն հասկացել ու չեն ուզում հասկանալ հայ եկեղեցու կրոնական, մշակութային ու նաև նույնքան կարևոր ազգային-հայրենասիրական առաքելությունը հայ ժողովրդի ծոցում:

Ափսոսանք հայտնելով, որ Հռոմի եկեղեցու հետ ի հաղորդության լինելը «բունին», այսինքն հայության մայր զանգվածի հետ տեղի չի ունեցել, Ամատունին, արտառոց մի դատողությամբ, հայ եկեղեցու ուղղափառության դիրքերի վրա ամուր կանգնած մեր հայրապետներին և վարդապետներին մեղադրում է «ազգային կղզիացման» մեջ: «Մոլի՛ս, **պադրե** Ամատունի, մոլի՛ս»: «Աստուծո խոսքին վաճառական» լինելդ «զքեզ ի մոլութիւն դարձուցանէ»[32]:

Ամատունին այդքան շո՞ւտ է մոռացել միթե Լեհաստանի և Տրանսիլվանիայի երբեմնի մեծ ու բարգավաճ թեմերի տխուր վախճանը հայ եկեղեցու և բովանդակ հայության համար, երբ այդ թեմերը բռնությամբ և հալածանքներով հաղորդակցության մեջ մտնելով կաթոլիկ եկեղեցու հետ և դուրս գալով «ազգային կղզիացումից», ընդմիշտ կորան հայության համար:

Հայ ժողովուրդը դառն փորձառությունն ունի չլսելու վարձկան հովիվների շողոմ հրավերները: Նա սրբությամբ և նահատակությամբ է պահել իր հայրերի սուրբ հավատը, այդ հավատի գանձարանը եղող Հայաստանյայց առաքելական եկեղեցին, որը ճշմարտության սյունն է մեր ժողովրդի համար, հայության անաղարտ խղճմտանքը, մեր փրկության տապանակը ուխտի:

Էկումենիկ շարժման այս ժամանակաշրջանում, երբ քույր եկեղեցիների կյանքի և գործունեության մեջ հետզհետե ավելի լայն տեղ են գտնում եղբայրական համագործակցության շինարար ոգին և միմյանց նկատմամբ

---

[30] Անդ, էջ 168:

Հետևաբար, ըստ Սիմեոն Երևանցու շատ ճիշտ արտահայտության, Հայց. առաքելական եկեղեցին **ո՛չ է հնացեալ զի նորոգեսցի, ո՛չ է թերի զի լրասցի:**

[31] Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ինքնորոշ ուղևորությունը, էջ 60;

[32] Գործք առաքելոց ԻԶ 246: Բ Կորնթ. Բ 17;

փոխադարձ հարգալիր վերաբերմունքը, միանգամայն ժամանակավրեպ ու չարամիտ մի ձեռնարկ է հանդիսանում Ամատունու սույն գիրքը:

Մենք հավատում ենք էկումենիկ ոգու ու շարժման աստվածահաճո զարգացումներին. հավատում ենք նաև, որ ժամանակների հոլովույթով կգա այն օրը, երբ հնարավոր կդառնա բոլոր եկեղեցիների միջև վերականգնումը հոգևոր միության և հաղորդության Քրիստոսի սիրո մեջ, սակայն ոչ մարդորսական ճանապարհներով և ոչ էլ պատմական եկեղեցիների մարմնից հատվածները դավանափոխ անելու միջոցով: Ընդհակառակն, նման արարքներ, հետզհետե ավելի կարգելակեն բաղձալի միությունը եկեղեցիների: Մենք այն համոզումն ունենք, որ այս ճշմարտությունը վերջնապես ուղիղ հասկացվել է այլևս Հռոմեական կաթոլիկ եկեղեցու մեր օրերի բարձրագույն ղեկավարության կողմից:

Իսկ եթե հայ կաթոլիկ մեր եղբայրները իսկապես կամենում են առաջնորդվել քրիստոնեական սիրո, միության և հայկական հոգևոր եղբայրության ոգով, ապա պետք է ընտրեն նախ իրենց վերադարձի ճանապարհը դեպի հայ ժողովրդի գիրկը, որից նրանք անիմաստ կերպով անջատված են մնում իբրև հայության հազիվ երկու տոկոսը կազմող փոքրամասնություն՝ երբեմն նույնիսկ թշնամանքներ հրահրելով նույն ժողովրդի ծոցում:

Ամատունի եպիսկոպոսի գրքի մասին խմբագրությունն իր խոսքն ավարտում է 1976 թվականի սեպտեմբերի 27-ին Վեհարանում Հայոց Հայրապետի գահակալության 20-ամյակի առթիվ Նրա հետևյալ հաստատումով.

«Հայաստանյայց եկեղեցին հայ ժողովրդի եկեղեցին է, նրա մայրն ու դաստիարակը և պահապան հրեշտակը բոլոր ժամանակներում: Հայ եկեղեցին նաև հետ այսու միշտ սրբությամբ պիտի պահպանի իր հավատացյալների հոտը մեկ ու անբաժան և անաղարտ, իր ուղղափառ դավանությամբ, իր ազգային պատմականորեն նվիրագործված ավանդություններով, իր նվիրապետական կազմակերպությամբ և ինքնագլուխ ղեկավարությամբ:

...Հայաստանյայց առաքելական եկեղեցին՝ սուրբ Ավետարանի ոգին ու քրիստոնեական մտածողությունն ու զգայնությունը վավերականորեն արտահայտող ինքնատիպ ոճերից մեկն է հանդիսանում համաքրիստոնեական պատմության հորիզոնին վրա: Այդ ժառանգությունը մենք պետք է պահպանենք և պիտի պահպանենք, որովհետև առանց նրան՝ քրիստոնեությունը պիտի դառնար նվազ հարազատ հայոց հոգիներին»:

«Այսպես է որ էկումենիկ հարաբերությանց ճանապարհին, մնալով մեկտեղ համախոհ եկեղեցիների միության իդեալին և «Աստուծո ժողովուրդ» համաքրիստոնեական մեծ գաղափարին, Հայաստանյայց եկեղեցին, ինչպես հազար և հինգ հարյուր տարիներ շարունակ, մնալու է անվերջ իր ավանդական կեցվածքին ու քրիստոնեական մտածելակերպին վրա, իբրև հոգևոր դաստիարակ և առաջնորդ իր հոտին, հայ ժողովրդի բոլոր զավակներին անխտիր»[33]:

---

[32] «Էջմիածին», 1976, հոկտ.-նոյեմ., էջ 5—6:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՐԻԳՈՐ Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՏԽՈՒՐ ԱՌԻԹՈՎ

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԳԵՐԱՍԻՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Երևան

Խորապես ցավում ենք, որ մեր հայրենի Մինիստրների սովետի նախագահ Գրիգոր Արզումանյանն այնքան վաղաժամ հեռանում է այս անցավոր աշխարհից՝ թափուր թողնելով այն բարձր պաշտոնը, որը վարում էր մեծ արժանավորությամբ և ջերմ հայրենասիրությամբ:

Հանուն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և հայրենաբնակ ու սփյուռքահայ մեր հավատացյալ ժողովրդի ներկայացնում ենք Մեր խորագույն ցավակցությունները մեր սգակիր կառավարության ու վշտահար ընտանիքին:

Հավերժական լո՜ւյս հանգուցյալի ազնիվ հոգուն հավիտենական խաղաղության աշխարհում:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
29-ը նոյեմբերի 1976 թ.



ԽՈՍՔ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Մեզի համար խոր վիշտ է հաստատել թէ ողբերգական կացութիւնը կը շարունակէ աւերներ գործել երբեմնի երջանիկ Լիբանանի մաքուր երկնքի տակ, ուր արաբ աստուածասէր ժողովրդի զաւակներուն երակներէն առատ արիւն կը հոսի տակաւին:

Մենք կը մնանք անձանձրոյթ աղօթող որ սիրոյ և համերաշխութեան փրկարար ոգին իջնէ Լիբանանի եղբայր համայնքներուն կեանքին վրայ և երկիրն ու բնակչութիւնը ամբողջ գտնեն իրենց խաղաղութիւնը և բարօրութիւնը:

Ողբերգական այս պայմաններուն մէջ կը շարունակէ ծանր ըլլալ նաև հայ համայնքի վիճակը: Հազարաւորներ մատնուած են թշուառութեան, շատեր նոյնիսկ կարօտ պնակ մը տաք կերակուրի: Ծանր է մանաւանդ երեխաներու և վիրաւորներու վիճակը:

Մենք հոգեպէս մխիթարուեցանք որ մէկ տարի առաջ Մեր հրատարակած կոչը լայն արձագանգ գտաւ ու Արևմտեան Եւրոպայի շրջանի Մեր հայրապետական պատուիրակի ու եկեղեցական մարմիններու կազմակերպած հանգանակութեամբ և Մայր Աթոռոս տրամադրած միջոցներով գոյացած աւելի քան երեք հարիւր հազար դոլլարի գումարը բաշխուեցաւ Լիբանանի՝ անխտիր բոլոր հայ կարօտեալներուն, Պէյրութի մէջ Մեր կազմած օգնութեան յանձնախումբի միջոցաւ:

Մենք մխիթարուեցանք հաստատելով թէ նաև այլ եկեղեցական ու բարեսիրական կազմակերպութիւններ ափիւռքի տարբեր շրջաններէն, փութացին օգնութիւններ հասցնել իրենց Լիբանանցի աղէտեալ եղբայրներուն ու քոյրերուն: Բարձր գնահատելով պարտինք յիշել Ամերիկայի Հ. Բ. Ը. Միութեան կազմակերպած օգնութեան գործը որ մինչև օրս կը շարունակուի:

Աղէտը սակայն այնքան մեծ է և կարիքները այնքան շատ ու բազմապիսի, որ Մենք խղճի պարտք կը նկատենք վերստին կոչ ուղղել համայն մեր ժողովուրդին, մեր բոլոր եկեղեցական կեդրոններուն և հայ կազմակերպութիւններուն որ չխնայեն իրենց եղբայրական օգնութիւնը Լիբանանի կարօտեալ ժողովուրդին և ի մասնաւորի հայ վարժարաններուն:

Օգնութիւնը պէտք է կատարուի առատաձեռնութեամբ ու անյապաղ, որպէսզի լիբանանահայութիւնը զգայ թէ լքուած չէ և թէ ամբողջ մեր ազգը իր կողքին կը գտնուի, վշտակից իրեն, օգնական իրեն: Ամէն հնարաւոր

ՀԱՅ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

միջոց ի գործ պէտք է դրուի, որպէսզի Լիբանանի հայերը, այս ծանր պայմաններու մէջ չյուսահատին և հնարաւոր չափով պահպանեն ու ամրապնդեն իրենց կրօնական ու կրթական համայնքային կազմակերպուած կեանքը, անշարժ մնալով իրենց տեղը, հաստատօրեն լաւատեսելով Լիբանանի խաղաղ ու լուսաւոր ապագայի նկատմամբ:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնէն օրհնութիւն աստուածային համայն հաւատաւոր ու բարեսիրտ մեր ժողովուրդին, այժմ և յաւիտեան. ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սուրբ Էջմիածին,
18 հոկտեմբեր 1976 թ.

«Էջմիածին» ամսագրի սույն համարում երախտագիտությամբ հրատարակում ենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի երկրորդ կոչը լիբանանահայ կարոտյալ ազգաբնակչությանը օգնելու համար:

Միաժամանակ ուրախ ենք արձանագրելու, որ Վեհափառ Հայրապետի սույն կոչից հետո, դեկտեմբերի սկզբներին, Լիբանանում դադարեց եղբայրասպան պատերազմների շառաչյունը, խաղաղության աղավնին վերջապես թևածեց գեղեցիկ Լիբանանի երկնակամարի վրա և «սիրո ու համերաշխության փրկարար ոգին» իջավ «Լիբանանի եղբայր համայնքներուն կյանքին վրա և երկիրն ու բնակչությունը ամբողջ» գտան «իրենց խաղաղությունը և բարօրությունը»:

Տասնիսն ամիսների ավերածություններից հավասարապես տուժեց Լիբանանի քրիստոնյա և մահմեդական ազգաբնակչությունը: Երկիրն այժմ վերաշինության ճանապարհի մեջ է: Կյանքը մտել է իր բնականոն ընթացքի մեջ: Բայց, ինչպես նշում է Վեհափառ Հայրապետը, «աղետը սակայն այնքան մեծ է և կարիքները այնքան շատ և բազմապիսի», որ հայրապետական երկրորդ կոչը տեղին է և արդար: Հույս ունենք, որ սփյուռքի բովանդակ հայությունը, մեր ազգային-եկեղեցական մարմիններն ու կազմակերպությունները չեն խնայելու «իրենց եղբայրական օգնությունը Լիբանանի կարոտյալ ժողովրդին և ի մասնավորի հայ վարժարաններուն»:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻՆ*

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻՆ

Վատիկան-Հռոմ

Այսու Մեր գրով հարկադրված ենք սրտի ցավով իրազեկ դարձնել Ձեզ մի պարագայի մասին, որը բնավ հաճելի չէ Մեզ: Խոսքը վերաբերում է հայ կաթողիկե որոշ հոգևորականների, որոնք այս վերջին տարիներին ցուցաբերում են այնպիսի մի ոգի և մեր մայր եկեղեցու ու ժողովրդի ծոցում կատարում են այնպիսի աշխատանքներ, որոնք երբեք չեն համապատասխանում մեր օրերի էկումենիկ ոգուն և նույնիսկ, Մեր կարծիքով, ձգտում են ինչ-որ չափով վնասել այն սքանչելի հարաբերություններին, որոնք զարգանում են ձեր մեծ Եկեղեցու և Հայաստանյայց առաքելական Եկեղեցու միջև, մանավանդ Մեր անմոռանալի և պատմական այցելությունից հետո Հռոմ:

Մենք շատ հստակ կերպով հիշում ենք, որ 1970 թվականին Վատիկան Մեր գտնվելու ժամանակ, Դուք մայիսի 11-ի գիշերը, Մեզ հետ պաշտոնական մի տեսակցության պահին, որին ներկա էր նաև Արևմտյան Եվրո-

---

* «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 22) հրապարակված Մայր Աթոռի Դիվանի 1976 նոյեմբեր 20 թվակիր Հայտարարության առնչությամբ Վեհափառ Հայրապետն անհրաժեշտ գտավ մի հատուկ գրությամբ Հայտարարության մեջ նշված պարագաները բարի ուշադրությանը հանձնել Հռոմի կաթոլիկ եկեղեցու կենտրոնի Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ Նորին Գերազանցություն կարդինալ Ժան Վիլլբրանդսին ուղղված սույն նամակով:

Վեհափառ Հայրապետը նույն ոգիով և անհրաժեշտ լուսաբանություններով նամակներ հղեց նաև մեր նվիրապետական Աթոռների գահակալներին, թեմական սրբազան առաջնորդներին, հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին և մի շարք հոգևոր հովիվների:

պայի Մեր հայրապետական պատվիրակ Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը, առանց որ Մենք որևէ ակնարկ անենք, հայտարարեցիք Մեզ, թե ձեր եկեղեցին մեր օրերին դեմ է դավանափոխական արարքների, և ավելացրիք. «Եթե նման դեպքեր լինեն ձեր ժողովրդի ծոցում, վստահ եղեք, թե մենք այդպիսի արարքների հետ համաձայն չենք լինի»: Բնականաբար Մեզ հաճելի եղավ Ձեր այդ հայտարարությունը, որ Մենք հետագայում, հարմար առիթով, հայտնեցինք մեր եպիսկոպոսներին բերանացի կերպով:

Այսօր սակայն ստիպված ենք Ձեզ այդ մասին գրելու, որովհետև վերջին երկու-երեք տարիների ընթացքում մանավանդ, հստակ կերպով երևում է որոշ հայ կաթողիկե հոգևորականների հետևողական ձգտումը՝ թափանցելու մեր մայր եկեղեցուն հավատարիմ ժողովրդի հավաքական և անհատական կյանքից ներս, մշակութային և հայ ազգային գործունեության ճանապարհով՝ որոշ համայնքների մեջ կատարելով նույնիսկ դավանափոխության ակտեր հայտնի կամ ծածուկ կերպով: Նման տեղեկություններ հասել են Մեզ թե՛ Եվրոպայից (Ֆրանսիայից, Ավստրիայից, Իտալիայից) և թե՛ Հարավային Ամերիկայից (մանավանդ Սան-Պաուլոյից):

Այստեղ պետք է նշենք նաև Հռոմի Լևոնյան միաբանության անդամ որոշ հոգևորականների կազմակերպյալ աշխատանքը Սովետական Հայաստանը լքող հայ քաղաքացիների շրջանակներում, որոնք Միացյալ Նահանգներ գնալու իրենց ճանապարհին կանգ են առնում Հռոմում՝ հովանավորությանը և հոգատարությանը ներքև ամերիկյան պատկան կազմակերպությունների: Ահա այս պատեհությունից օգտվելով, Լևոնյան հոգևորականները շրջապատում են նրանց և դավանափոխական աշխատանք կատարում իրենց քարոզություններով, սուրբ հաղորդությամբ և մկրտություններով: Այս իրողությունը ծանր անդրադարձում է ունենում սփյուռքում ապրող մեր ժողովրդի զավակների, ինչպես նաև Սովետական Հայաստանի բնակչության վրա, որոնք Լևոնյանների այդ գործունեության մեջ տեսնում են ոչ միայն հակաէկումենիկ ոգի, այլև հակահայրենասիրական վերաբերմունք, իբրև Հայաստանից արտագաղթը քաջալերողների, արարք, որը հակահայկական քաղաքական ակտ է նկատում մեր հայրենաբնակ ժողովուրդը:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կեսի բնաջնջումից հետո, այսօրվա հայ հայրենիքի բնակչության թիվը պակասեցնելու ամեն արարք մեր ազգային գիտակցության առջև հավասար է ազգային դավաճանության: Եվ կարծում ենք, որ Լևոնյան միաբանությունը չպիտի ցանկանար այդպիսի տխուր դերի մեջ գտնվել որևէ ձևով:

Վերջին տարիներին դավանափոխական բնույթ սկսած են ստանալ նաև հայ կաթողիկե հոգևորականների պարբերական սիստեմատիկ այցելությունները Սովետական Հայաստան և նրանց քարոզչական աշխատանքը անպաշտոն կերպով: Ինչպես հայտնի է Ձեզ, անցյալ հոկտեմբերին, Մայր Աթոռիս հանդիսությունների առիթով, Կարապետ եպիսկոպոս Ամատունին մտադիր էր եղել նույնիսկ ոչ օրինական կերպով կաթողիկե մի հայ քահանա ձեռնադրել՝ առանց համապատասխան համայնքի գոյության մեր երկրում:

Այս առթիվ պիտի ցանկանայինք նաև Ձեր ուշադրությանը հանձնել նույն Ամատունի եպիսկոպոսի նոր գիրքը՝ «Ոսկան Երևանցի և իր ժամանակը» վերնագրով՝ նվիրված Ոսկան վարդապետ Երևանցու կյանքին ու գործին, գիրք, որ լեցուն է անարդար և վիրավորական դատողություններով

մեր մայր եկեղեցու և մեր մի շարք հայրապետների նկատմամբ՝ բոլորովին հեռու ավետարանական սիրո և էկումենիկ եղբայրական ոգուց:

Այս բոլոր տխուր երևույթները հաստատելով, Մեր նախագահությամբ Գերագույն հոգևոր խորհուրդս անհրաժեշտ գտավ հրապարակել 20 նոյեմբեր 1976 թվակիր Հայտարարությունը՝ նպատակ ունենալով եղբայրական հրավեր կարդալ հայ կաթողիկե միաբանությանց անդամներին, որ նրանք հարգեն հայ ժողովրդի բազմադարյան մայր եկեղեցու հեղինակությունը, որ հարգեն մեր սեփական ազգային հայրենիքը շենցնելու և զորացնելու կամեցողությունը և, վերջապես, հարգեն մեր օրերի էկումենիկ ոգին, որի եռանդուն պաշտպաններից մեկն է հանդիսանում նաև Հռոմեական կաթողիկե Եկեղեցին իր մեծ հեղինակությամբ:

Ներփակ ուղարկում ենք Ձեզ Մայր Աթոռիս Դիվանի վերոհիշյալ Հայտարարությունը՝ ի գիտություն Ձեզ և ձեր Քարտուղարության:

Այս տողերը հղելով Ձեզ, Մենք այն խոր համոզումն ունենք, որ Դուք անձամբ, ձեր Քարտուղարությունը և ձեր Եկեղեցին ուղիղ պիտի հասկանան և պիտի բաժանեն Մեր այս մտահոգությունները, որով ցանկանում ենք հեռացնել ամեն հնարավոր խոչընդոտ, ներկայիս և ապագային, քրիստոնեական սիրո հարաբերությունների ճանապարհից, հարաբերություններ, որոնք զարգանում են այնքան աստվածահաճո կերպով մեր երկու Եկեղեցիների միջև:

Թույլ տվեք վերջացնել Մեր այս գիրը՝ բերելով Ձեզ Հայաստանյայց եկեղեցու և անձամբ Մեր եղբայրական սիրո և բարձր հարգանքի անկեղծ զգացմունքները դեպի սուրբ Պետրոսի պատմական Աթոռը և առաքելական ձեր մեծ Եկեղեցին:

Ամենաբարի մաղթանքներով և եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
3-ը նոյեմբերի 1976 թ.



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանուն Ամենայն Հայոց կաթողիկոսի Մայր Աթոռիս Դիվանը լիազորված է վշտով հաստատելու, թե հայ կաթողիկե մեր հոգևոր եղբայրներից ոմանք վերջին տարիներին լծված են դավանափոխության աշխատանքի մեր մայր եկեղեցու և ժողովրդի ծոցում, իսկ Լևոնյան միաբանության անդամները Հռոմում հրապարակավ քաջալեր ու հովանավորող են հանդիսանում մայր հայրենիքը լքողներին:

Մայր Աթոռս սպասում է հայ կաթողիկե միաբանությանց անդամներից՝ հարգել Հայաստանյայց առաքելական եկեղեցու քրիստոնեական բազմադարյան հեղինակությունը, մեր օրերի միջեկեղեցական էկումենիկ հարաբերությունների բարերար ոգին և մեր վերածնված ժողովրդի հայրենաշեն զգացումները:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
20-ը նոյեմբերի 1976 թ.



ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծանոթացանք Լևոնյան վարժարանի ղեկավարության 13 դեկտեմբեր 1976 թվակիր «Ճշտումներ»-ին՝ լույս տեսած «Յառաջ» թերթում 15 դեկտեմբերին, ի պատասխան մեր 20 նոյեմբեր 1976 թվակիր Հայտարարության:

Թե Ժնևի Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, իբրև միջազգային կազմակերպություն, հոգում է Արևելյան Եվրոպայի երկրներից արտագաղթողների ծախսերը Հռոմում մինչև նրանց Ամերիկա մեկնումը, դա հանրահայտ իրողություն է բազում տարիներից ի վեր և քաջ հայտնի նաև Մայր Աթոռիս:

Մեր վիշտն այն է, սակայն, որ, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի այդ գործունեությանը զուգընթաց, Լևոնյան վարժարանի որոշ միաբաններ հատուկ ոգևորություն են ցուցաբերում սիրաշահելու մայր հայրենիքը լքող ուղեկորույսներին՝ վատաբանելով «անհավատ երկիր» Հայաստանը, քարոզչությամբ ձգտելով «ճշմարիտ» հավատքի բերելու նրանց, երբեմն մկրտություններ և պսակի խորհուրդներ կատարելով, ինչպես նաև կազմակերպված շրջագայություններին կանոնավոր կերպով ուղեկցելով նրանց Հռոմում և շրջաններում: Այսպես, օրինակ, ուղեկցողի պաշտոն կատարողներն են Լևոնյաններից՝ քույր Անթուանեթը և հայր Հովսեփը:

Մայր Աթոռիս կարծիքով ուղիղ պիտի լիներ, որ Լևոնյան վարժարանի ղեկավարությունը հորդորեր իր միաբաններին՝ հեռու մնալ նման արարքներից:

Մայր Աթոռիս Հայտարարության մեջ արտահայտված գանգատը վերաբերում է Լևոնյաններին, որպես հայ մարդկանց, և ոչ թե Եկեղեցիների համաշխարհային խորհրդին և այլ օտար կազմակերպությանց, որոնք չեն կարող հասկանալ մեր ազգային ցավերը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
27-ը դեկտեմբերի 1976 թ.



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Սույն թվականի հոկտեմբերի 22—25 օրերին **Վեհափառ Հայրապետը** հովվապետական այցելությամբ եղավ Շիրակի թեմի Կիրովական, Ստեփանավան և Լենինական քաղաքներում՝ անձամբ տանելով Իր ողջույններն այդ համայնքների Իր հոգևոր զավակներին և հավատացյալներին:

Ստեփանավանում

Հոկտեմբերի 22-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը գնացքով մեկնեց դեպի Կիրովական:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի դիվանապետ **տ. Արսեն եպս. Բերբերյանը,** սրբոց Հակոբյանց միաբանության անդամ **տ. Կյուրեղ եպս. Գաբիկյանը,** որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում, **տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը**՝ որպես գավազանակիր, և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ պրն. **Արծրուն Գալիկյանը:**

Հինգժամյա ուղևորությունից հետո գնացքը հասնում է Կիրովականի քաղաքային կայարան, ուր Հայոց Հայրապետին ջերմորեն դիմավորում են Շիրակի թեմի առաջնորդ **տ. Նարեկ եպս. Շաքարյանը,** թեմական և եկեղեցական խորհուրդների պատվարժան անդամները և բազմահարյուր հավատացյալներ:

Կայարանում Հայոց Հայրապետին դիմավորում, ողջունում և բարի գալուստ են մաղթում Կիրովական քաղաքի քաղաքային սովետի նախագահ

Լևոն Դանիելյանը, տեղակալ **Վլադիմիր Ավետիսյանը** և այլ պաշտոնական անձինք:

Այստեղ Հայոց Հայրապետին ողջունում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Անդրանիկ Հասրաթյանը:**

Այնուհետև Վեհափառ Հայրապետն Իր շքախմբով և պետավտոտեսչության պատվո մեքենաների ուղեկցությամբ հովվապետական այցելության է մեկնում դեպի Ստեփանավան:

Ստեփանավանի ճանապարհի կեսին Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել, քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահի անունից, առաջին տեղակալ **Ռաֆայել Պապիկյանը**, կուլտուրայի բաժնի վարիչ **Թորգոմ Գրիգորյանը**, քաղաքային սովետի պատասխանատու աշխատակիցներ և այլ պաշտոնական անձինք: Այստեղ, ճանապարհի վրա, փոխանակվում են ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքեր:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Ստեփանավանի «Անահիտ» պանսիոնատ:

Հոկտեմբերի 23-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Ստեփանավանի հայոց ս. Սարգիս եկեղեցի, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով: Եկեղեցին ու նրա շրջափակը լցված էին Ստեփանավանի, Ալավերդու, Կալինինոյի և այլ շրջաններից եկած բազմահազար ուխտավորներով:

Արարողության ավարտին **տ. Նարեկ եպս. Շաքարյանը**, հանուն Ստեփանավանի ս. Սարգիս եկեղեցու վարչության և հավատացյալների, ջերմորեն ողջունում է **Հայոց Հայրապետի** շնորհաբեր այցելությունը հետևյալ ուղերձով.

Տ. Նարեկ եպիսկոպոսի ողջույնի խոսքը Ստեփանավանի ս. Սարգիս եկեղեցում

Վեհափառ Հայրապետ,

Շիրակի տիրախնամ թեմի Ստեփանավանի և շրջակայքի հավատացյալ Ձեր ժողովուրդն ու հոգևոր որդիները եկել են այսօր այստեղ մեծ բազմությամբ, որպեսզի արժանանան Ձեր հայրական տեսությանն ու հայրապետական սուրբ օրհնությանը:

Վեհափառ Տեր, Դուք ահա երկու տասնամյակ արժանավորապես բազմել եք սուրբ Գրիգոր Լուսավորչի գահին և հոգևոր, եկեղեցական, շինարարական, հայրենասիրական, խաղաղասիրական մեծ աշխատանքներ եք տանում: Երբ տեսնում ենք Ձեր բազմաբեղուն գործունեությունն ու շինարարական մեծ իրագործումները, այդ բոլորով մենք ուրախանում ենք: Ձեր բարձր անձնավորության միջոցով Ամենայն Հայոց Հայրապետությունն էր, որ է՛լ ավելի պայծառացավ, և Դուք դարձաք ոսկե օղակը հարյուր երեսուն կաթողիկոսներով պսակազարդված հայոց եկեղեցու:

Ս. Էջմիածնում վերջերս տեղի ունեցած հանդիսություններն ու խանդավառությունները ահա, Վեհափառ Տեր, շարունակվում է այսօր այստեղ՝ Ստեփանավանի ս. Սարգիս եկեղեցում:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, «օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»: Օրհնեցեք մեզ բոլորիս, որպեսզի մենք է՛լ ավելի ներշնչվենք Ձեր եկեղեցաշեն ու հայրենանվեր մեծ աշխատանքով, որպես եկեղեցու սպասավոր, որպես

քաղաքացի, և կարողանանք Ձեզանից կրակ ստանալ, որպեսզի մենք ևս մեր հերթին է՛լ ավելի շենացնենք թե՛ մեր եկեղեցիները և թե՛ մեր հայրենիքը:

Օգտվելով այս առիթից, համայն մեր ժողովրդի անունից իմ որդիական շնորհակալությունն եմ բերում Ձեզ ու նաև տեղական իշխանություններին, որոնք միշտ բարյացակամ վերաբերմունք են ցույց տվել մեր եկեղեցու և մեր հանդեպ:

Օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր, և թույլ տվեք ներկա ժողովրդի անունից Ձեր սուրբ Աջը համբուրել:

Իր ողջույնի խոսքի ավարտին տ. Նարեկ եպիսկոպոսը խնդրում է Հայոց Հայրապետին՝ Իր ողջույնն ու օրհնությունը տալու եկեղեցում հավաքված հավատացյալ ժողովրդին.

Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը
Ստեփանավանի ս. Սարգիս եկեղեցում

(28 հոկտեմբեր 1976 թ.)

Սիրելի ժողովուրդ,

Աստուծո ողորմությամբ Մենք գալիս ենք սուրբ Էջմիածնից՝ բերելու ձեզ բոլորիդ Մեր օրհնությունը: Առաջին անգամն է, որ լինում ենք ձեր քաղաքում՝ Ստեփանավանում, այս սուրբ եկեղեցու կամարների ներքո: Դուք մեր ժողովրդի զավակներն եք, մեր հարազատներն եք, մեր սիրելիներն եք, մեր եկեղեցու հավատացյալներն եք: Ահա թե ինչու իրոք Մենք այս պահին չափազանց հուզված ենք և շատ ուրախ: Եվ Մեր ուրախությունը մի քանի պատճառներ ունի: Նախ Մենք երջանիկ ենք, որ գտնվում ենք մեր մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի ամենագեղեցիկ քաղաքներից մեկում՝ ծաղիկ քաղաք Ստեփանավանում, մի քաղաք, որ համարյա վերջին տասնամյակներին ծնվեց, զարգացավ ու ծաղկեց: Սրանից մի 50—60 տարի առաջ նա մի փոքրիկ գյուղ էր՝ կորած այս սարերի լանջերին, իսկ այժմ նա բազմամարդ քաղաք է և հայտնի առողջարանային կենտրոն, արդյունաբերության կենտրոն և հողամշակության տնտեսության կենտրոն: Եվ Մեր սրտին հարազատ է այս քաղաքը նաև իր անունով՝ Ստեփանավան անունով, որը հավերժացնում է հիշատակը մեծ հայրենասեր և մեծ հեղափոխական, այս հողի զավակ անմոռանալի Ստեփան Ծաղումյանին: Դուք հպարտ պետք է լինեք, որ այդպիսի մեծ մի մարդու անունը կրող քաղաքի քաղաքացիներն եք:

Մեր ուրախությունը նաև այսօր այն բանի համար, որ այստեղ կազմակերպված է նաև այս եկեղեցական համայնքը ս. Սարգիս եկեղեցու շուրջ՝ թեմական առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոսի ջանքերով և աշխատանքով: Եվ վերջերս այս եկեղեցին օժտվեց մի բարեջան քահանայով և կամաց-կամաց ոտքի կանգնեց, սկսավ շենանալ:

Այս առիթով Մենք գնահատանքի և շնորհակալության խոսք ունենք ասելու նաև Ստեփանավան քաղաքի իշխանությանց ներկայացուցիչներին, որոնք ամեն առիթով օժանդակեցին և իրենց բարյացակամ վերաբերմունքով այս եկեղեցին իր շրջափակով և իր ներքին տեսքով ավելի և ավելի բարեզարդվեց և կարողացավ իր հոգևոր առաքելությունն սկսել:

Ի գնահատումն այստեղի հոգևոր հովիվ տ. Վահան քահանայի, Մենք նրան ուզում ենք ձեր ներկայության շնորհել այս լանջախաչը՝ մաղթելով

նրան քաջառողջություն և երկար կյանք, որպեսզի շարունակե իր հոգևոր ծառայությունն այս եկեղեցում:

Սիրելի ժողովուրդ, մեր մայր հայրենիքի ծոցում մեր օրերում մեր եկեղեցին, շնորհիվ մեր պետական իշխանությանց բարյացակամ վերաբերմունքին, հառաջդիմում է և զարգանում՝ իր կենտրոնն ունենալով բազմադարյան Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Դուք գիտեք անշուշտ, թե ինչ է նշանակում մեր ժողովրդի կյանքում և՛ անցյալում, և՛ այսօր՝ ս. Էջմիածինը: Այդ պատմական սրբավայրը հոչակավոր է ոչ միայն մեր ազգի համար, մեր հայրենիքի համար, այլ նաև համայն հայության համար, որի մի մասը գտնվում է արտասահմանում: Դուք գիտեք, որ հայ ազգն իր դժբախտ անցյալի հետևանքով, մանավանդ 1915 թվականի ահավոր կոտորածներից հետո, մոտ երկու միլիոն նահատակվեց և բազմահազար մարդիկ, որ կարողացան ազատվել այդ կոտորածներից, ցրվեցին աշխարհով մեկ, և այսօր ամբողջ աշխարհում մենք ունենք մոտավորապես ավելի քան երկու միլիոն հայություն: Արտասահմանի մեր ժողովուրդը հոգով-սրտով կապված է մեր վերածնված մայր հայրենիքին և հատկապես ս. Էջմիածնին, որովհետև նրանք բոլորը թեև Հայաստանի քաղաքացիները չեն, սակայն իրենց կրոնքով, իրենց եկեղեցիով ու ազգությամբ պատկանում են ս. Էջմիածնին, նրանք մեր քույրերն ու եղբայրներն են, մեր հարազատներն են: Եվ այսօր ս. Էջմիածինը հանդիսանում է այդ ամբողջ հայության հոգևոր և ազգային կենտրոնը: Ավելին կասեինք տակավին, որ ս. Էջմիածինը, իբրև պատմական հուշարձան, հանդիսանում է համաշխարհային արժեք ունեցող մի կոթող, իր ճարտարապետությամբ, իր հնությամբ և իր հոգևոր առաքելությամբ, իբրև քրիստոնեության հնագույն կենտրոններից մեկը աշխարհի վրա: Դուք գիտեք անշուշտ, որ հայ ժողովուրդը քրիստոնեությունն ընդունեց Դ դարու սկզբին, ուրեմն մոտ 1700 տարիներ առաջ և հանդիսացավ առաջին ժողովուրդը, որ դարձավ պետականորեն քրիստոնյա ժողովուրդ: Այդ պատահեց Տրդատ թագավորի և ս. Գրիգոր Լուսավորչի օրով, 301 թվականին, և մի քանի տարի հետո կառուցվեց Էջմիածինը՝ իբրև առաջին հայկական եկեղեցին:

Ահա այդ օրերից սկսյալ մինչև մեր օրերը ս. Էջմիածինը մնաց անսասան՝ իբրև հայ ժողովրդի հոգևոր, ազգային և մշակութային կենտրոն:

Անցյալում, պատմության ընթացքում, երբ դժբախտ օրեր ունեցավ հայ ազգը, տառապեց նաև Էջմիածինը, զոհվեցին նաև հայ հոգևորականներ, երբեմն զոհվեցին նույնիսկ կաթողիկոսներ չարչարանքների կամ աքսորի մեջ, բռնակալ և վայրագ արշավող ցեղերի կրունկի տակ: Բայց Աստված երբեք չլքեց հայ ազգին, և միշտ հնչեց փրկության և ազատության ժամը:

Այդպես եղավ նաև 1920 թվականին, երբ թշնամի բանակներն արշավել էին մեր փոքրիկ Հայաստանի վրա, որպեսզի կոտորեն նաև Արևելահայաստանի կամ Ռուսահայաստանի հայությունը: Բարեբախտաբար Աստված էլի օգնության հասավ, և շնորհիվ ռուս ժողովրդի և կարմիր բանակի անմիջական օգնության հայ ազգը փրկվեց մահվան ճիրաններից, և ահա հիմնվեց Սովետական Հայկական Հանրապետությունը՝ մեր այսօրվա Հայաստանը, և այդ օրվանից հառաջդիմության և բարգավաճման ու շինարարության ճանապարհ բացվեց՝ խաղաղության և ապահովության պայմաններում:

Ահա մենք այդ օրերն ենք ապրում այսօր և մենք ուրախանում ենք, երբ մեր Հայաստանի քաղաքացիները լիովին կատարում են իրենց քաղաքացիական և հայրենասիրական պարտականությունը, որպեսզի ավելի արագ թափով աճի, զարգանա և շենանա մեր Մայր Հայաստանը:

Ձեր քաղաքը՝ Ստեփանավանը, մի պայծառ, կենդանի օրինակ է հանդիսանում այդ շինարարության, այդ հառաջդիմության, այդ ծաղկումի և այն երջանիկ պայմանների, որոնք ստեղծված են մեր երկրում: Հայ եկեղեցին չի կամենում հեռու մնալ հայ ժողովրդի հառաջդիմության այս ընթացքից և ուզում է ինքն էլ իբրև եկեղեցի, իբրև հոգևոր կենտրոն իր պարտականությունը կատարել, որ իրեն բաժին է ընկած: Եվ այսօր, սոցիալիստական կառուցման Հայաստանի պայմանների մեջ, եկեղեցին և հավատացյալ ժողովուրդն իր պարտականությունը կատարում է և պետք է կատարի:

Սիրելի ժողովուրդ, այսպիսի երջանիկ իրադրության մեջ, մեր եկեղեցին աղոթում է ու գործում նաև աշխարհի խաղաղության համար: Դա ոչ միայն քաղաքական իմաստ և կարևորություն ունի, այլ նաև քրիստոնեական, որովհետև Քրիստոսի Ավետարանը հիմնականում սիրո և խաղաղության մի հրավեր է՝ ուղղյալ բոլոր մարդկանց: Քրիստոս երբ խաչի վրա մահանում էր, իր վերջին խոսքերից մեկը եղավ՝ «ձեզ եմ թողնում իմ խաղաղությունը»:

Ահա թե ինչու մենք երբ մասնակցում ենք խաղաղության պայքարին, դա ոչ միայն մեր քաղաքացիական պարտականությունն ենք նկատում, այլ նաև մեր հոգևոր քրիստոնեական պարտականությունը: Մեր քրիստոնեական խիղճը թելադրում է մեզ պայքարել հանուն աշխարհի խաղաղության ամրապնդման:

Այժմ կարող ենք Մեր խոսքը վերջացնել՝ կրկին անգամ հայտնելով Մեր հոգու մխիթարությունը, որ գտնվեցինք այսօր ձեզ մոտ: Մաղթում ենք, որ այս եկեղեցին հետզհետե ավելի բարեզարդվի և դառնա մի փոքրիկ հոգևոր կենտրոն ձեզ բոլորիդ համար: Վստահ ենք, որ նաև հոգևոր ձեր առաջնորդը՝ Նարեկ եպիսկոպոս, որ այնքան ժրաջանությամբ և նվիրումով գործում է Շիրակի թեմում, հաճախ ձեզ պետք է այցելի ինքն էլ՝ հոգևոր սնունդ բաշխելով ձեզ բոլորիդ և բերելու նաև բարի լուրեր Մայր Աթոռ ս. Էջմիածնի գործունեությունից: Մենք աղոթում ենք առ Աստված, որպեսզի Տերը միշտ ծաղկյալ և միշտ բարօրության մեջ պահպանի Ստեփանավանի ձեր այս գեղեցիկ քաղաքը՝ իր ողջ բնակչությամբ:

Մաղթում ենք նաև, որ այս եկեղեցին միշտ իր դռները բաց պահի իր հավատացյալների առջև, որպեսզի նրանք գան գոնե կիրակի օրերը՝ մասնակցելու սուրբ պատարագի արարողությանց և հոգեպես մխիթարվեն՝ լսելով Աստուծո ձայնը:

Թող ձեր զավակները և թոռնիկներն աճեն, մեծանան և դառնան ազնիվ քաղաքացիները մեր հայրենիքի: Մաղթում ենք ձեր բոլոր բարի և շինարար գործերին լիակատար հաջողություն:

«Շնորհք և սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեան. ամէն»:

Հայոց Հայրապետն Իր խոսքի մեջ Իր մասնավոր գնահատանքն է արտահայտում նաև ս. Սարգիս եկեղեցու գործադիր կոմիտեի անդամների նվիրյալ աշխատանքի հանդեպ՝ ի պայծառություն տեղի եկեղեցու:

Ժամը 13-ին **Վեհափառ Հայրապետն** Իր շքախմբով և ս. Սարգիս եկեղեցու գործադիր մարմնի անդամներով այցելություն է տալիս Ստեփանավանի քաղաքային սովետի նախագահ **տիկին Ծաղիկ Գևորգյանին,** որը, շրջապատված քաղաքային սովետի պատվարժան անդամներով և քաղսովետի այլ բաժինների պատասխանատու աշխատողներով, ջերմորեն դիմա-

վորում է Հայոց Հայրապետին և առաջնորդում ընդունարան, ուր տեղի է ունենում սրտագին զրույց՝ ջերմ մթնոլորտում:

Քաղաքային սովետի հարգելի տիկին նախագահն ապա Հայոց Հայրապետի պատվին ճաշկերույթ է տալիս, որի ընթացքում, խոսք առնելով, ողջունում է Նրա սույն պատմական առաջին այցելությունը Ստեփանավան հետևյալ ուղերձով.

Տիկին Ծաղիկ Գևորգյանի խոսքը

Ձերդ Սրբություն և

Կաթողիկոսական շքախմբի պատվարժան անդամներ,

Անչափ շնորհապարտ ենք Ձեր հայրապետական շնորհառաք այցելության համար՝ Լոռվա չքնաղ բնաշխարհի այս գողտրիկ անկյունը՝ Ստեփանավան:

Ձերդ Սրբություն, կկամենայի արտահայտել ինչպես իմ, այնպես էլ Ստեփանավանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի բոլոր անդամների ու քաղաքիս աշխատավորության խորին գոհունակությունը այն առիթով, որ երջանկությունն ունեցանք ընդունելու հայ առաքելական եկեղեցու մեծ ու շինարար Հովվապետին, խաղաղության պայքարի անխոնջ Մարտիկին, հայրենիքը և ազգանվեր ու հայրենակարոտ սփյուռքը կամրջող Մայր Աթոռի Գահակալին:

Օգտվելով պատեհ առիթից, թույլ տվեք իմ և քաղսովետի աշխատավորության անունից ի խորոց սրտի շնորհավորել Ձերդ Սրբությանը՝ գահակալության Ձեր 20-րդ հոբելյանի առթիվ:

Դուք մեծ ավանդ եք ներդրել աշխարհում առաջին քրիստոնեական եկեղեցու պատմության տարեգրության մեջ, ակտիվորեն մասնակցել խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման վեհագույն ու մարդասիրական գործին:

Դուք քրիստոնեական եկեղեցիների համաշխարհային խորհրդաժողովներում և այլուր ունեցած Ձեր բազում ելույթներում, այդ թվում՝ Մոսկվայում, Բեռլինում, Հելսինկիում, Պրագայում, հայտնի դարձրիք բազմաչարչար ու ավերակների միջից վերստին հպարտորեն վեր հառնած հայ ժողովրդի ստեղծագործ ոգին, նրա ապրելու վճռակամությունը և նրա մեծագույն ցանկությունները, այն է՝ խաղաղություն, շենացում, երջանկություն և հավասարություն աշխարհի ժողովուրդներին բոլոր:

Սովետական կառավարությունը, ըստ արժանվույն գնահատելով խաղաղության գործի մեջ Ձեր ներդրած ազնիվ ջանքերը, Ձեզ արժանացրել է կառավարական բարձր պարգևի՝ «Պատվո նշան» շքանշանի:

Դուք անսպառ եռանդով սատարել եք սփյուռքի մշակութային կյանքին, հովանավորել ուսումնական հաստատությունների գործունեությունը, Ձեր խոսքով ու գործով ձգտել եք սփյուռքահայության հոգում միշտ վառ պահել հայրենասիրության ազնիվ կրակը:

Կրկին ու կրկին կամենում եմ արտահայտել բերկրանքը մեր կառուցապատվող ու օրավուր գեղեցկացող Ստեփանավանի ողջ հայությանը Ձեր այցելության առթիվ, քաղաք, որ կրում է հայ ժողովրդի մեծագույն զավակներից մեկի՝ Ստեփան Շահումյանի անունը, քաղաք, որ մեր կուսակցության ու կառավարության հոգատարության շնորհիվ կդառնա սոցիալիստական Հայաստանի լավագույն առողջարաններից մեկը:

Վստահ եմ, որ Ամենայն Հայոց Հովվապետին հաճելի կլինի իմանալ այն մասին, որ սկսվել են Ստեփան Շահումյանի հուշակենտրոն-համալիրի, քաղաքային հրապարակի, բնակելի ամբողջական թաղամասերի շինարարական աշխատանքները:

Օրեցօր զարգանում է մեր քաղաքը. կառուցվում են նոր գործարաններ, ֆաբրիկաներ, որոնք տալիս են տարեկան 16 միլիոն ռուբլու արտադրանք:

Քաղաքի անունը շենացնում են տարեկան 4 միլիոն արտադրանք տվող կապի սարքավորումների և տրանսֆորմատորների գործարանները, որոնց արտադրանքն առաքվում է ոչ միայն Սովետական Միության հարյուրավոր քաղաքներ, այլև Բուլղարիա, Ռումինիա, Ճապոնիա, Գերմանիա և այլ երկրներ:

Մեր հաստատ կարծիքով Ձեզ հաճելի կլինի իմանալ, որ 10-րդ հնգամյակի առաջին տարին բազում հաջողություններով է նշում մեր շրջանի աշխատավորությունը, և այդ արդյունքները գոհացուցիչ են և բոլորիս ուրախացնող:

Բարձր բերք է ստացվել հացահատիկի, կարտոֆիլի ցանքերից: Բարձր արտադրանքներ են ստացվում անասնապահական մթերքների արտադրության գործում:

Ուրախալի է նշել, որ ինչպես ողջ Սովետական Միության, այնպես էլ մեր Մայր Հայաստանի ժողովրդի հետ այժմ հոգևոր և մշակութային վերելքով է ապրում նաև Ստեփանավանի հայությունն ու ողջ բնակչությունը՝ շնորհիվ մեր կուսակցության և կառավարության հոգատարության:

Ձերդ Սրբություն, Լոռվա ոստանից, նրա աշխատավորության անունից կրկին ու կրկին անսպառ կորով, երկար տարիների կյանք ու քաջառողջություն եմ մաղթում Ձեզ, հաջողություններ Ձեր մեծ ու ազնիվ առաքելության մեջ՝ ի փառս հայոց հնավանդ քրիստոնեական եկեղեցու և մեր վերածնված ազգի:

Այնուհետև ստեղծված հայրենասիրական մթնոլորտում խոսք է առնում նաև Հայոց Հայրապետը, ողջունում ներկայությունը բոլորի, Իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնում սույն ջերմ ընդունելության և հյուրասիրության, Ստեփանավանի քաղաքային սովետի հարգելի նախագահ տիկին Ծաղիկ Գրիգորյանի բարիգալստյան այնքան ջերմ ու հայրենասիրական խոսքերի համար և հայտնում է նաև Իր ուրախությունը, որ առաջին անգամ է այցելում պատմական Լոռի, հայրենական այս չքնաղ ու գողտրիկ անկյունը՝ Ստեփանավան, քաղաք, որ հարազատ է նաև Իր սրտին, որովհետև այն հավերժացնում է հիշատակը մեծ հայրենասեր և այս հողի զավակ Ստեփան Շահումյանի:

Հայոց Հայրապետն այնուհետև Իր գնահատանքի և շնորհակալության խոսքն է ուղղում Ստեփանավանի քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներին, որոնք ամեն առիթով օժանդակել են, որ տեղի ս. Սարգիս եկեղեցին իր շրջափակով ու իր ներքին տեսքով Է՛լ ավելի բարեզարդվի՝ կատարելու իր հոգևոր, հայրենասիրանան առաքելությունը տեղի հայ ժողովրդի կյանքում:

Իր խոսքի ավարտին Հայոց Հայրապետն Իր բարձր գնահատությանն ու օրհնությանն է արժանացնում նաև մեր այսօրվա հայրենական վերածննդյան պայծառ նվաճումների մեջ Ստեփանավանի ազգաբնակչության

բերած կարևոր նպաստը բոլոր բնագավառներում՝ ի բարօրություն հայրենյաց:

Վեհափառ Հայրապետը Ստեփանավանում. քաղաքային սովետի նախագահ տիկին Ծաղիկ Գևորգյանի և այլ պաշտոնական անձնավորությունների հետ

Ճաշկերույթի ընթացքում բաժակաճառերով հանդես են գալիս նաև տեղակալ **Թորգոմ Գրիգորյանը, տ. Նարեկ** և **տ. Կյուրեղ** եպիսկոպոսները:

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը և Ստեփանավանի

քաղաքային սովետի հարգելի տիկին նախագահը հուշանվերներ են փոխանակում:

Սույն պաշտոնական ընդունելությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետը դարձյալ լինում է ս. Սարգիս եկեղեցում, հետաքրքրվում եկեղեցու վերանորոգման հարցով և թելադրում կատարել անհրաժեշտ վերանորոգչական աշխատանքները, որպեսզի եկեղեցուն տրվի առավել վայելուչ տեսք՝ ի մխիթարություն հավատացյալների:

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է տալիս Ստեփանավանին և մեկնում դեպի Լենինական: Ստեփանավանի քաղաքային իշխանությունները Հայոց Հայրապետին ճանապարհում են հարգանքով և հանդիսավորությամբ:

Լենինականում

Նույն օրը, երեկոյան, **Վեհափառ Հայրապետը** ժամանում է Լենինական և հանդիսավորությամբ ու «Հրաշափառ»-ով մուտք գործում ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցի, ուր հավաքված բազմահազար հավատացյալները ջերմորեն ողջունում են Նրա օրհնաբեր ժամանումը:

Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը, հանուն Ծիրակի թեմի թեմական և եկեղեցական վարչությունների ու ողջ հավատացյալների, ողջունում է Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը բարիգալստյան հետևյալ ուղերձով.

Տ. Նարեկ սրբազանի ողջույնի խոսքը Լենինականի ս. Աստվածածին եկեղեցում

Վեհափառ Տեր,

Ծիրակի թեմը համայն և մանավանդ Լենինականի հավատացյալ ժողովուրդը օրեր շարունակ հետևեցին վերջերս Մայր Աթոռ ս. Էջմիածնում սրբալույս մեռոնի օրհնության և Ձերդ Վեհափառության գահակալության 20-ամյակի առթիվ տեղի ունեցած հանդիսություններին և անհամբեր սպասում էին Ձեր օրհնաբեր և շնորհաբեր այցելությանը:

Վեհափառ Տեր, չորրորդ անգամը լինելով ահա գալիս եք Դուք այցելության Ձեր այս բանավոր հոտին: Լենինականի հավատացյալ ժողովուրդը Ձեզ ծանոթ է, և Դուք քաջ գիտեք նրա ոգին, նրա բարեպաշտությունը, նրա հայրենասիրությունը: Այդ ոգին ու հավատքը մեզ փոխանցված են ո՛չ միայն ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղից և մեր եռամեծ հայրապետներից, այլև այն կրակից, որ մեր ժողովրդի սրտում վառ է պահում Ձերդ Սրբությունն ահա 21 տարիներից ի վեր: Դուք, Վեհափառ Տեր, մեզ սովորեցրել եք գնալ հոգևոր ճանապարհով, սիրել մեր հայրենիքը, մեր եկեղեցին և այն ամենը, որ մենք կոչում ենք քրիստոնեական արժեք և ավետարանական բարոյական:

Վեհափառ Տեր, օրհնեցեք մեր բոլորին, Լենինականի հավատացյալ ժողովրդին համայն, որը կարոտով և ծնրադիր աղոթքով սպասում է Ձեր օրհնությանը, օրհնություն, որ բերում եք ս. Էջմիածնից, ս. Գրիգոր Լուսավորչի գահից:

Բարի եկաք, Վեհափառ Տեր:

Այս ներկա ժողովրդի անունից որդիաբար համբուրում եմ Ձեր Օծյալ սուրբ Աջը:

Խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունում է ներկա խուռներամ հավատացյալներին և բաշխում Իր օրհնություններն ու բարի մաղթանքները:

Ապա Նորին Սրբությունը նախագահում է կիրակամտի ժամերգությանը, որից հետո Իր շքախմբով առաջնորդվում «Անի» հյուրանոց:

Հայրապետական հանդիսավոր ս. պատարագ և քարոզ Լենինականի ս. Աստվածածին եկեղեցում

Հոկտեմբերի 24. կիրակի: Գյուտ խաչ:

Առավոտյան ժամը 11-ին **Վեհափառ Հայրապետը** հանդիսավոր ս. պատարագ է մատուցում ս. Աստվածածին եկեղեցում և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալներին:

Հայրապետական ս. պատարագից մի պահ (ս. Աստվածածին եկեղեցի, Լենինական, հոկտեմբերի 24 1976 թ.)

Եկեղեցին ու նրա շրջափակը լեցուն են հավատացյալների բազմությամբ: Ծատերը եկել են նույնիսկ հեռավոր շրջաններից՝ տեսնելու և լսելու Հայոց Հայրապետին:

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում է ս. Ցոթ վերք եկեղեցու քառաձայն երգչախումբը՝ ղեկավարությամբ տ. Արամ ավագ քհն. Բոյաջյանի:

Սուրբ Սեղանին սպասարկում են **տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Կյուրեղ սրբազանները, տ. Մոմիկ վարդապետը** և քահանայից դասը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է **Վեհափառ Հայրապետը.**

Վեհափառ Հայրապետի քարոզը ս. Աստվածածին եկեղեցում

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Մենք գալիս ենք մեր ժողովրդի սրբություն սրբոց Մայր Աթոռ ս. Էջմիածնից և բերում ենք Ծիրակի ողջ ժողովրդին ու հատկապես ձեզ, որ հավաքվել եք այս սուրբ կամարների ներքո, Աստուծո օրհնությունը, Մեր սրտից բխած ամենաբարի, ամենաջերմ մաղթանքներով, որ Աստված ձեզ բոլորդ պահի-պահպանի քաջառողջ և հաջողություն շնորհի ձեր բոլոր ազնիվ աշխատանքներին, աշխատանքներ՝ նվիրված ձեր ընտանիքի պահպանման, ձեր կյանքի բարօրության և, մանավանդ, աշխատանքներ՝ նվիրված մեր պաշտելի և սիրելի մայր հայրենիքի շինության և էլ ավելի պայծառ ապագայի:

Սիրելի ժողովուրդ, այսօր կիրակի է, սովորական մի կիրակի օր, երբ Մենք սուրբ պատարագ ենք մատուցում: Դուք կարող եք հարցնել, թե ի՞նչ է նշանակում կիրակի: Բոլորդ օգտագործում եք այս բառը, ամեն շաբաթ կրկնվում է կիրակի օրը, և դուք ասում եք՝ այսօր կիրակի օր է, վաղը երկուշաբթի է: Նախ ասեմ, որ **կիրակի** բառը հայերեն չէ, հունարեն բառից ծագում առած է և իր բուն իմաստով նշանակում է Տիրոջ օր, Աստուծո օր: **Տեր** ասելով հասկանում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Ուրեմն ամեն կիրակի Հիսուսի օրն է, մի օր՝ նվիրված մեր Տիրոջ և Փրկչին՝ Հիսուսի Քրիստոսի հիշատակին: Այդ օրը բոլոր քրիստոնյաները հավաքվում են եկեղեցիներում, որպեսզի նշեն այդ հիշատակը սուրբ պատարագի մատուցմամբ:

Դուք կարող եք հարցնել նաև՝ ի՞նչ է նշանակում պատարագ: Ես պետք է ասեմ, որ ամեն կիրակի մենք նշում ենք ոչ թե պարզապես Հիսուս Քրիստոսի հիշատակը, այլ նրա զոհաբերումի հիշատակը, նրա չարչարանքների, նրա խաչելության, նրա թաղման հիշատակը և նրա հարության հիշատակը: Հենց **պատարագ** բառը, որ հայերեն է, նշանակում է զոհաբերում: Մենք գիտենք սուրբ Ավետարանի պատմությունից, թե երկու հազար տարիներ առաջ Հիսուս Երուսաղեմ քաղաքում զոհվեց: Չար ձեռքեր նրան չարչարեցին ու անարգեցին, նրա ուսին ծանր մի խաչափայտ դրեցին և այդպես նրան բարձրացրին մինչև Գողգոթա կոչված լեռը: Այնտեղ նրա մարմինն այդ խաչափայտի վրա մեխեցին, և նա կարճ ժամանակ հետո մահացավ՝ մեծ տառապանքների մեջ: Հետո նրա աշակերտներն ու նրա մայրը՝ Մարիամ, որ մենք պաշտում ենք իբրև Աստվածամայր, թաղեցին նրան: Բայց երրորդ օրը, շաբաթից դեպի լույս կիրակի, Հիսուս աստվածային հրաշքով հարություն առավ: Նրա մարմինը բարձրացավ երեր և անհայտացավ, գնաց դեպի հավիտենական աշխարհ: Ահա Հիսուսի այս զոհաբերության ու հարության հիշատակն է, որ մենք նշում ենք ամեն կիրակի օր՝ պատարագի ընթացքին:

Մենք խոր հուզումով հիշում ենք թե երկու հազար տարիներ առաջ մեզ նման մի մարդ, որը կոչվում էր Հիսուս, զոհվեց, նահատակվեց: Միայն թե, նա թեև մեզ նման մի մարդ էր և մարդու նման տառապեց, չարչարվեց և մահացավ, բայց նրա մեջ կար նաև աստվածայինը, որի շնորհիվ նա հա-

րություն առավ և ճանապարհ բացեց բոլոր հավատացյալների համար հավիտենական կյանքին:

Մեկ ուրիշ հարց էլ կարող եք տալ, և լավ է որ տաք մանավանդ դուք, երիտասարդներդ, թե ինչո՞ւ համար Հիսուս զոհվեց, ինչո՞ւ նահատակվեց, ի՞նչ պատճառով նրան խաչ բարձրացրին և սպանեցին: Որովհետև, սիրելիներ, սրանից երկու հազար տարիներ առաջ Հրեաստան երկրում տիրապետում էր մի բռնակալ քաղաքական իշխանություն, Հռոմեական իշխանությունը, որ այն ժամանակ, ինչպես գիտեք դուք պատմությունից, տարածվել էր Միջերկրական ծովու գրեթե բոլոր երկրների հողամասերի վրա, մինչև իսկ մեր Հայաստանի սահմանները: Ահա այս բռնատիրական պայմանների տակ արդարությունը կորած էր, և մարդիկ տառապում էին ճնշումներից, կեղեքումներից, հալածանքներից, շահագործումներից և նախատինքներից՝ և՛ անհատական իմաստով, և՛ սոցիալական իմաստով, և՛ ազգային իմաստով:

Ահա այդ պայմաններում, այդ անարդար աշխարհի պայմաններում ծնվեց Հիսուս և նոր խոսք բերեց մարդկանց, խոսք՝ արդարության, խոսք՝ հավասարության, խոսք՝ մարդասիրության, խոսք՝ խաղաղության: Եվ հազիվ նա երեք տարի է ինչ քարոզում էր այս համամարդկային գաղափարները, արդեն նրա շուրջ թշնամական մթնոլորտ զարգացավ: Նույնիսկ յուրայինները, նրա ազգակիցները, մանավանդ բարձրաստիճան հոգևորականները և իշխանավորները, հալածեցին նրան: Նրանց դուր չէր գալիս Հիսուսի համամարդկային սիրո և խաղաղության ու հավասարության գաղափարները: Այն ժամանակ հրեաները հավատում էին Աստուծո, նրանք հավատացյալներ էին և սպասում էին, որ Աստված նրանց մի փրկիչ ուղարկի, որպեսզի ազատվեն Հռոմեական Կայսրության շղթաներից: Սակայն նրանք խտրական ոգի ունեին: Նրանք ուզում էին փրկություն միայն իրենց համար, միայն հրեա ժողովրդի համար: Մյուս ժողովուրդներին նրանք նկատում էին ինչ-որ ոչ ընտրյալ ժողովուրդներ, կարծում էին թե իրենք էին միայն ընտրյալները: Հետևաբար Աստված պետք է փրկություն շնորհեր միայն հրեաներին և ոչ մյուս ազգերին: Հիսուս թեև ինքն էլ հրեա ժողովրդի զավակ, սակայն քարոզում էր, որ Աստված հավասարապես Աստվածն է բոլոր ժողովուրդների անխտիր, որը փրկություն պետք է շնորհի բոլորին: Նա խտրություն չէր դնում ազգությունների միջև: Նա ասում էր՝ բոլոր ազգությունները, բոլոր մարդիկ աշխարհում հավասար են և իրար եղբայրներ:

Հիսուս ա՛յս մեծ գաղափարը բերավ համաշխարհային պատմության բեմի վրա և պահանջեց, որ բոլոր մարդկանց համար լինի արդարություն, հավասարություն և խաղաղություն: Այսպիսով նա հանդիսացավ մարդկային պատմության ամենամեծ հեղափոխականներից մեկը, ամենամեծն իսկապես: Եվ իր ա՛յս մարդասիրական, հումանիստական, ինչպես պետք է ասեինք այսօր, գաղափարների համար էր, որ նրան սկսան ատել, հալածել, թշնամանալ և վերջիվերջո նրան դատապարտեցին և սպանեցին:

Սիրելի ժողովուրդ, թեև այս բոլորը պատահել են մեզանից երկու հազար տարիներ առաջ, բայց Հիսուսի զոհաբերումն այնքան համամարդկային իմաստ ունի, որ այսօր էլ մենք չենք կարող մոռանալ այն:

Ինչպես ծանոթ է ձեզ էլի ս. Ավետարանի պատմությունից, Հիսուս իր մահից երեք օր հետո հարություն առավ: Այդ հարությունը խորհրդանշում է արդարության հաղթանակը: Այսօր էլ մենք հավատում ենք, թե՛ Հիսուսի զոհաբերումի խորհրդին և թե՛ նրա հարության: Որով հավատում ենք, հաս-

տատ կերպով հավատում ենք արդարության գաղափարի հաղթանակին: Ամեն մարդ, ձեզանից ամեն մեկն արդարության զգացմունք ունի: Երբ ձեր կյանքում կատարվում են անարդար գործեր, անազնիվ գործեր, դուք ընդոստանում եք, ձեր արդարության զգացմունքը վիրավորվում է, և պահանջում եք, որ արդար դատաստան լինի, որ արդարություն լինի, որ բարին հաղթանակի, և չարը՝ պարտվի: Հիսուս իր զոհաբերումով և հարությամբ խորհրդանշում է նաև այսօր՝ արդարության հաղթանակի գաղափարը ընդդեմ չարին ու մեղքին: Ու այդ հաղթանակով Աստուծո Որդին բացում է ամեն մարդու առաջ հոգու փրկության ճանապարհը:

Մարդկանց միջև սիրո և եղբայրական, ժողովուրդների միջև բարեկամության և խաղաղ գոյակցության գաղափարների ավետաբերը եղավ մեր Տերը և Փրկիչը Հիսուս Քրիստոս, որով նա նոր ճանապարհ բաց արեց մարդկային պատմության մեջ: Ճիշտ է, մարդկային տկարությունների հետևանքով, այլևայլ պատմական սոցիալ-քաղաքական պայմանների բերումով միշտ չէ, որ հաղթանակեցին արդարությունն ու սիրո և խաղաղության գաղափարները: Մենք գիտենք մեր իսկ ժողովրդի պատմությունից, թե ինչքա՞ն անարդարություններ եղան մեր ազգի դեմ անցյալ դարերի ընթացքում, ինչքա՞ն զոհվեց և կոտորվեց մեր անմեղ ժողովուրդը: Հենց սրանից վաթսուն և ավելի տարիներ առաջ քիչ էր մնացել, որ, Արևմտահայաստանի հայության բնաջնջումից հետո, նույն թշնամիները, սուլթանների և փաշաների ղեկավարության ներքև, բնաջինջ անեին նաև մեր այսօրվա Հայաստանի ազգաբնակչությանը: Քյազիմ Քարաբեքիր փաշան հասել էր ձեր Լենինական քաղաքի դռների առաջ և պատրաստվում էր կործանել նաև Արևելահայաստանը: Սակայն վերջին ժամին արդարության ձայնը հնչեց, և մեր վտանգված ժողովրդին օգնության հասավ ռուս ժողովուրդը, կարմիր բանակը, 1920 թվականին: Թշնամիները ետ մղվեցին, և Հայաստանը փրկվեց: Ահա թե ինչպես նաև մեր ժամանակաշրջանում այսպիսի անարդարություններ կատարվեցին մեր հայ ժողովրդի կյանքի դեմ, բայց ի վերջո արդարությունը հաղթանակեց, և մեր ժողովուրդն ահա հիսուն և ավելի տարիներից ի վեր Սովետական Հայաստանի խաղաղ և ապահով պայմաններում աճում է, բարգավաճում է և զարգացնում է իր կյանքը բոլոր բնագավառներում: Մենք հավատում ենք, թե հետ այսու այլևս ոչ մի նման փորձություններ չեն լինի մեր ժողովրդի պատմական զարգացման ճանապարհի վրա, և նա աստիճան առ աստիճան կկենսագործի իր բոլոր ազնիվ, արդար իղձերն ու երազանքները:

Մեր օրերում մեր եկեղեցին, ուրիշ քույր եկեղեցիների հետ միասին, աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերի հետ միատեղ, աղոթում է, գործում է հանուն աշխարհի խաղաղության, որպեսզի այլևս երկրագնդի վրա ոչ մի տեղ և երբեք չլինեն թշնամանքներ ազգությունների միջև, չլինեն հափշտակումներ, շահագործումներ և անարդարություններ, և ամեն ազգ իր հողամասի վրա իր արդար քրտինքով աշխատի և հառաջդիմի, և բոլորն այս արևի տակ լինեն եղբայրներ ու դառնան երջանիկ: Այս իդեալները, որ այսօր համամարդկային իդեալներ են, որով առաջնորդվում է նաև մեր հայրենի պետությունը, իրենց արմատներն ունեն Հիսուսի Ավետարանի մեջ:

Սիրելիներ, մենք վստահ ենք, թե Լենինականի մեր ժողովուրդը միշտ հավատարիմ է մնացել իր նախնյաց լույս հավատքին, քրիստոնեական հավատքին, մեր Հայաստանյայց եկեղեցուն և Մայր Աթոռ ս. Էջմիածնին և այսպիսի փառավոր հուշարձաններ է կառուցել իբրև աղոթքի տուներ: Լե-

նինականի այս հոյակերտ եկեղեցին, վկայություններից մեկն է ձեր հավատքի և ձեր հավատարմության: Այսօր Մենք հոգեպես միսիթարված ենք, որ ամբողջ Շիրակի թեմը լավ կազմակերպված է և իր հոգևոր առաքելությունը հաջող կերպով առաջ է տանում իր եկեղեցիներով, իր քահանա հայրերով, եկեղեցական գործադիր վարչություններով և թեմական խորհուրդով՝ առաջնորդությանը ներքև Նարեկ եպս. Շաքարյանի, որին դուք քաջ ծանոթ եք և զգում ենք Մենք, որ դուք բոլորդ և՛ այստեղ, Լենինականում, և՛ Կիրովականում, և՛ Ստեփանավանում սիրում և հարգում եք նրան, որովհետև նա՝ Նարեկ եպիսկոպոսը իր ողջ կյանքն անշահախնդիր կերպով, անձնուրացորեն նվիրել է եկեղեցուն, եկեղեցական գործի հառաջդիմության: Մենք նույնպես գնահատում ենք նրան և բերում ենք Մեր օրհնությունը և բարի մաղթանքները, որ Աստված նրան քաջառողջ շատ երկար կյանք պարգևի, որպեսզի շարունակե իր սուրբ գործն այստեղ, Շիրակի հայոց աշխարհում: Իբրև փոքրիկ նշան Մեր սիրույն և Մեր գնահատանքին, այս պահին ձեր բոլորի ներկայության ցանկանում ենք մի սրբանկար նվիրել նրան՝ Աստվածամոր վերափոխման պատկերով:

Սիրելի սրբազան, վարձքերնիդ կատար:

Սիրելիներ Մեր, մաղթում ենք ձեզ ամենքիդ, որ երկար ապրեք, քաջառողջ ապրեք, չմոռնաք մեր սուրբ եկեղեցին, չմոռնաք ս. Էջմիածինը: Հոգով կապված մնացեք այս ս. տաճարին, որտեղ դուք ամեն անգամ պիտի գտնեք հոգու խաղաղություն, միսիթարություն և լուսավորություն:

«Շնորհք և սէր Տեառն մերոյ և Փրկչի Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ, այժմ և միշտ. ամէն»:

Պաշտոնական ընդունելություն ի պատիվ Հայոց Հայրապետի

Հավարտ ս. պատարագի, ժամը 15-ին, Շիրակի թեմի առաջնորդ սրբազանը, թեմական խորհուրդը և եկեղեցական վարչությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, պաշտոնական ճաշկերույթ են տալիս «Անի» հյուրանոցում:

Պատվո սեղանի շուրջ, **Հայոց Հայրապետի** կողքին, տեղ են գրավել Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահ **Էմիլ Կիրակոսյանը,** առաջին տեղակալ **Հարություն Մանուկյանը,** քարտուղար **Սամսոն Հեքիմյանը,** հրահանգչական բաժնի վարիչ **Ալբերտ Մաթևոսոդլյանը** և այլ պաշտոնական անձինք:

Ճաշկերույթին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Անդրանիկ Հասրաթյանը:**

Հայրենական բարիքներով ծանրաբեռն սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ, հայրենասիրական մթնոլորտ: Բաժակներ են բարձրացվում Հայոց Հայրապետի կենաց արևշատության ու Նրա եկեղեցաշեն, հայրենանվեր և խաղաղասիրական հետագա գործունեության, ինչպես նաև հայրենյաց բարօրության և մեր պետական ղեկավարների հայրենաշեն գործերի հաջողության համար:

Այս առթիվ, հանուն Շիրակի թեմի, Վեհափառ Հայրապետին նվիրվում է Շիրակի թեմի մեջ մտնող Մաստարա գյուղի Է դարի պատմական եկեղեցու մեծադիր յուղաներկ նկարը, որի հեղինակն է նկարիչ **Վոլոդյա Մարգարյանը:**

Սույն ընդունելությունն ավարտվում է Հայոց Հայրապետի շնորհակալության և օրհնության ճառով:

Ճաշկերույթից հետո Հայոց Հայրապետը, ուղեկցությամբ Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահ **Էմիլ Կիրակոսյանի**, ծանոթանում է Լենինականի տեսարժան վայրերին, նորակառույցներին և ի մասնավորի այցելում Հայրենական պատերազմի ընթացքում զոհված լենինականցի հայ հերոսների հիշատակին նվիրված հուշարձան, որն ուներ հետևյալ արձանագրությունը.

Պաշտոնական ճաշկերույթի ժամանակ Հայոց Հայրապետին է նվիրվում Մաստարայի եկեղեցու յուղաներկ նկարը (Լենինական, 24 հոկտեմբերի 1976 թ.)

«1975 թ.: Կոթողն այս կառուցվեց հանմահություն Հայրենական մեծ պատերազմում հանուն մեր մեծ հայրենիքի զոհված լենինականցի մարտիկների»:

Այստեղ Վեհափառ Հայրապետը Հոգվոց է արտասանում բոլոր հայ նահատակաց հիշատակին:

Այնուհետև Նորին Սրբությունն այցելում է նաև Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան: Այստեղ հուշամատյանում Հայոց Հայրապետը հետևյալ արձանագրությունն է թողնում.

«Մեր օրհնությունը անմահ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի պայծառ հիշատակին:

ՎԱԶԳԵՆ Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց

24 հոկտեմբերի 1976 թ.»:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը Լենինականի քաղաքային սովետի նախագահի հրավերով Իր շքախմբով ներկա է լինում Լենինականի Մոավյանի անվան նորակառույց թատրոնի շենքում Հակոբ Պարոնյանի «Ծողոքորթը» կատակերգության ներկայացմանը:

Այց քաղաքային սովետ

Հոկտեմբերի 25-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, **Վեհափառ Հայրապետն** Իր շքախմբով այցելում է Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահ **Էմիլ Կիրակոսյանին:** Հայոց Հայրապետի և քաղաքային սովետի նախագահի միջև տեղի է ունենում ջերմ և սրտագին զրույց: Գործկոմի հարգելի նախագահը զրույցի ընթացքում Հայոց Հայրապետին մանրամասնորեն պատմում է Լենինական քաղաքի մշակութային, կրթական, շինարարական և տնտեսական նվաճումների և ապագա Է՛լ ավելի խոստումնալից հեռանկարների մասին տասներորդ հնգամյակի նախատեսություններով:

Հայոց Հայրապետն Իր հերթին ջերմորեն ողջունում է գործկոմի հարգելի նախագահին, Ծիրակի հայրենասեր, ավանդապահ և ժրաջան ողջ աշխատավորությանը՝ բարեմաղթելով բոլորին նորանոր հաջողություններ իրենց հերոսական աշխատանքում՝ ի փառս հայ մշակույթի, ի բարօրություն հայրենյաց՝ սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում:

Այցելության ավարտին փոխանակվում են հուշանվերներ:

Սույն ընդունելությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ժամը 13-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է տալիս Լենինականին: Պետավտոտեսչության պատվո մեքենաների ուղեկցությամբ Լենինականի քաղաքային իշխանությունները, Ծիրակի թեմի թեմական ու եկեղեցական խորհուրդները ճանապարհում են Հայոց Հայրապետին դեպի Մայր Աթոռ:

Հոկտեմբերի 22—25 օրերը անմոռանալի կմնան Ծիրակի տիրախնամ թեմի մեր օրերի պատմության մեջ շնորհաբեր հովվապետական այցելությամբ Ամենայն Հայոց Հայրապետի:



ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 27-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում տաղանդավոր գրող Վիլյամ Սարոյանը, որը հայրենիքում էր գտնվում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Հայաստանի գրողների միության հրավերով:



Հայոց Հայրապետը մեծ գրողին նվիրում է բյուրեղապակյա բաժակ՝ քանդակված Մայր տաճարի պատկերով

Մեծանուն գրողին ընկերակցում էր բանաստեղծ Վահագն Դավթյանը:

Սրտառուչ ու ջերմ էր մեծ գրողի երկրորդ հանդիպումը Հայոց Հայրապետի հետ Վեհարանում:

Առաջին անգամ 1960 թվականին Վիլյամ Սարոյանը Հայոց Հայրապետին հանդիպել էր Վիեննայում:

Այս երկրորդ հանդիպման առթիվ Վեհափառ Հայրապետի և մեծ հոգու ու սրտի տեր գրողի միջև տեղի է ունենում ջերմ ու երկար զրույց՝ հին բարեկամների մտերմությամբ, զրույց, որին ներկա են լինում նաև Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը:

Ապա Վիլյամ Սարոյանն այցելում է Նոր Վեհարան, Վեհարանի պատկերասրահ, որտեղ դիտում է, մեծ ոգևորությամբ և ուշադրությամբ, հայ արվեստի տարբեր բնագավառներին պատկանող ընտիր նմուշներ՝ իր տպավորություններն արտահայտելով ասեն քայլում «հիանալի է», «զարմանալի է» խանդավառ պոռթկումներով:

Մեծանուն գրողն այցելում է Մայր տաճար և նրան առընթեր եկեղեցական արվեստի թանգարան:

Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին հրաժեշտ տալուց առաջ Վեհարանում, հյուրերի ոսկե մատյանում, Վիլյամ Սարոյանը թողնում է հետևյալ արձանագրությունը.

«Սուրբ Էջմիածինը հայ հոգու կենտրոնն է, սիրտը և ամբողջականությունը: Այստեղ գտնվելը հոգեկան մեծ փորձառություն է և ներքին զորացման ու անխորտակելիության մի մեծ լուսավորում այս անցավոր և խոցելի մարդկային աշխարհում: Այն միաժամանակ խոնարհության և հպարտության մի պահ է ինձ՝ այցելուիս համար:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Հոկտեմբեր 27 1976 թ.»:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Կալկաթայի հայոց հոգևոր հովիվ տ. Հակոբ քհն. Գյոկչյանը, որը ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում, և քարոզում է հավուր պատշաճի՝ հաղորդելով հնդկահայության եղբայրական ողջույնները Մայր Աթոռի միաբանությանը և ներկա հավատացյալ հայ ժողովրդին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում աստղագիտության մասին հետաքրքիր դասախոսություն կարդաց Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատող տիկին Ա. Բարսամյանը:

Դասախոսությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի բարձր դասարանի ուսանողները:

Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ:

*
* *

Դեկտեմբերի 4-ին, շաբաթ.—Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

*
* *

Դեկտեմբերի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Քյոլնի հայոց հոգևոր հովիվ տ. Գարեգին աբղ. Ներսիսյանը, որը ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամ դոկտ.-պրոֆ. Կարո Ղաֆադարյանի, հոգևոր ճեմարանի հայագիտության դասախոս Կամսար Ավետիսյանի և նկարիչ Գևորգ Գրիգորյանի (Զոտտո) մահվան քառասունքի առթիվ:

Վեհափառ Հայրապետն արարողությու-

նից առաջ քարոզում է «Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ և բարեգութ, գթա քո արարչական սիրով ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց» հոգեհանգստյան աղոթքի բնաբանով՝ վեր հանելով նորոգ հանգուցյալ մտավորականների կատարած գիտական, հասարակական ծառայությունները հայ մշակույթին և հայ ժողովրդին:

Հոգեհանգստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է հանգուցյալ Կարո Ղաֆադարյանի, Կամսար Ավետիսյանի, Գևորգ Գրիգորյանի ընտանիքներին, հարազատներին, բարեկամներին, ընկերներին և ափոփանքի Իր հայրական խոսքում մխիթարում նրանց կրած մեծ վիշտը, հանգուցյալներին բարեմաղթում հոգու հավիտենական խաղաղություն և հանգիստ:

* * *

Դեկտեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհարանում Վեհափառ Հայրապետն ընդունում է ԱՄՆ-ի էներգետիկ հետազոտությունների և մշակումների վարչության ղեկավար դոկտ. Ռոբերտ Զ. Սիմենսի, որը գլխավորում էր ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության սովետա-ամերիկյան համատեղ հանձնաժողովի չորրորդ նստաշրջանի պատվիրակությանը: Հարգելի հյուրին ընկերակցում էր ՍՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ Ս. Մ. Պետրոսյանը:

Հայոց Հայրապետի և ներկա գիտնականների միջև տեղի է ունենում հետաքրքիր զրույց՝ ջերմ մթնոլորտում:

* * *

Դեկտեմբերի 9-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի դահլիճում «Ասորական աղբյուրները» թեմայով դասախոսություն կարդաց ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող Հայկ Մելքոնյանը: Վերջերս Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս էր ընծայել գիտնականի «Ասորական աղբյուրներ» աշխատությունը:

* * *

Նույն օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելությունը բալանդիստական միաբանության անդամ հայր Մայքլ ֆոն Էսբրեքի (Բելգիա):

* * *

Դեկտեմբերի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 13-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելությունը Լիբանանում Սովետական Միության արտակարգ ու լիազոր դեսպան Նորին Վսեմություն Ալեքսեյ Սալտատովի և նրա հարգելի տիկնոջ:

Հայոց Հայրապետի և մեծահարգ պրն. դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

* * *

Դեկտեմբերի 16-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի դահլիճում երիտասարդ լուսանկարիչ Սերգեյ Համբարձումյանը սլայդների օգնությամբ ցուցադրեց իր աշխատանքները, որոնք վերաբերվում էին Հայաստանի պատմական վանքերին, խաչքարերին և տեսարժան վայրերին:

Սլայդների ցուցադրմանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և քարոզում «Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթ. Ե 7) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում քահանայական իր առաջին ս. պատարագը մատուցեց տ. Հակոբ աբղ. Գրլենճյանը և քարոզեց «Հանոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ միայն զԱւետարանն Աստուծոյ, այլ եւ զանձինս մեր» (Ա Թեսաղ. Բ 8) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 30-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը: Գերա-

գույն հոգևոր խորհրդի սույն նիստին հրավիրվել էր նաև Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, որը հանգամանորեն զեկուցեց 1977 թվականի ընթացքում Մայր Աթոռի վերանորոգչական-շինարարական աշխատանքների մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդը հաստատեց վերանորոգչական-շինարարական աշխատանքների ներկայացված ծրագիրն ու նախահաշիվը, որը կազմում է շուրջ 300.000 ռուբլի:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանի միջնորդությամբ, քահանայական իրենց բարեխիղճ և ազնիվ աշխատանքների համար, հայրապետական կոնդակներով ավագ քահանայության պատվի արժանացան և քահանայական լանջախաչ կրելու իրավունք ստացան հետևյալ քահանա հայրերը.

1.—Ավագ քահանայի պատվի տվչություն

ա.—Տ. Արամ քհն. Բոյաճյան (Լենինականի ս. Աստվածածին եկեղեցի):

բ.—Տ. Կարապետ քհն. Քելեմյան (Լենինականի ս. Աստվածածին եկեղեցի):

2.—Լանջախաչի տվչություն

ա.—Զավեն քհն. Մոսկովյան (Կիրովականի ս. Աստվածածին եկեղեցի):

բ.—Տ. Հակոբ քհն. Կեսենյան (Լենինականի ս. Աստվածածին եկեղեցի):

գ.—Տ. Սուրեն քհն. Ծատուրյան (Լենինականի ս. Աստվածածին եկեղեցի):

դ.—Տ. Վահան քհն. Մարգարյան (Ստեփանավանի ս. Սարգիս եկեղեցի):





ԵՐԿՈՒ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՁԵՌԱԳՐԵՐ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ի հոգածությամբ անցյալ տարի Մաշտոցի անվան Մատենադարանը հարստացավ երկու մեծարժեք ձեռագրերով:

1975 թ. հուլիսի 25-ին Վեհափառը Երևանում հանդիսավոր պարագաներում ձեռագրերը հանձնեց Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Լևոն Խաչիկյանին: Նույն օրը ձեռագրերը մուծվեցին Ձեռագրատուն: Առաջինը Երուսաղեմի սրբոց Հակոբյանց Մատենադարանի № 3627 (Գանձարանի № 119) ձեռագիրն է՝ գրված և նկարազարդված 1268 թ. Հռոմկլայում հանճարեղ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի ձեռքով:

Այս փառահեղ մատյանը Վեհափառ Հայրապետի փափագով Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և սրբոց Հակոբյանց միաբանությունը նվիրեցին Մաշտոցի անվան Մատենադարանին՝ «ի վայելումն ազգիս հայոց»:

Ձեռագիրն սկսվում է պատրիարք սրբազանի հետևյալ ընծայականով. **«Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա կաթողիկոսի փափաքով, սրբազան պատրիարքը Երուսաղէմի և սրբոց Յակոբեանց միաբանութիւնը Երևանի պետական Մաշտոցի Մատենադարանին կը նուիրեն Ռոսլինի սոյն ձեռագիրը՝ ի վայելումն ազգիս Հայոց:**

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ
պատրիարք հայոց Երուսաղէմի

30 յունիս 1975
Երուսաղէմ»:

Սույն ընծայականն ավարտվում է Վեհափառի հետևյալ վկայությամբ. **«Մենք՝ Վազգէն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց, այսօր, 25 յուլիս 1975 թ.-ին, սոյն ձեռագիր Աւետարանը յանձնեցինք Երևանի ս. Մեսրոպի անուան պետական Մատենադարանին:**

ՎԱԶԳԷՆ Ա.»:

Ռոսլինի Ավետարան. Մոգերի երկրպագությունը

Ձեռագիրը, «Թորոս Ռոսլինի Աւետարան» անունով, մուծվեց Մատենադարանի Ձեռագրատուն 10675 համարի տակ[1]:

Երկրորդ ձեռագիրը Վեհամոր՝ Սիրանույշ Պալճյանի հիշատակին նվիրված մատյանն



Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի ընծայականը՝ Թորոս Ռոսլինի Ավետարանը Մաշտոցի անվան Մատենադարանին նվիրելու մասին

է: Ձեռագիրն առաջին հայացքից դիտողին պատկառանք է ներշնչում իր հնությամբ՝ դեղնավուն մագաղաթով ու երկաթագրով: Ձեռագիրը 1975 թ. հունվարի 1-ին Վեհամոր հիշատակին է նվիրել Մայր Աթոռի միաբան Վահան եպիսկոպոս Տերյանն այսպիսի մակագրությամբ. **«Հնաբույր, խնկաբույր, հայաբույր մատյանս այս նվիրում եմ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, վասն հիշատակի հանգուցյալ Տիրամոր՝ Սիրանույշ Պալճյանի, որը նվիրեց մեր ազգին շինարար, հայրենասեր, բարի և անբիծ Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա-ին:**

ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

1/1—1975 թ.»:

Սույն հիշատակագրությունից ձախ կարդում ենք Վեհափառի ընծայականը. **«Մենք Վազգէն Ա կաթողիկոս ամենայն Հայոց, այսօր, 25 յուլիս 1975 թուին, սոյն ձեռագիր Աւետարանը յանձնեցինք Երևանի ս. Մեսրոպի անուան Մատենադարանին:**

ՎԱԶԳԷՆ Ա.»:

Սույն ձեռագիրը ևս, ի հիշատակ Վեհամայր Սիրանույշ Պալճյանի, «Վեհամոր Աւետարան» մականունով մուծվեց Մատենադարանի Ձեռագրատուն 10680 համարի տակ[2]:



Վեհափառ Հայրապետի հանձնարարականը Թորոս Ռոսլինի Ավետարանը Մատենադարանին հանձնելու մասին

Վեհամոր Ավետարանի վերաբերյալ առաջին գրավոր տեղեկությանը հանդիպում ենք Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի

[1] Ընծայականները գրված են ձեռագրի 1ա և 332բ էջերում: Ձեռագրի մասին տես **Լ. Խաչիկյան**, Թորոս Ռոսլինի ձեռագրի վերջին հանգրվանը (հոդված), «Գարուն», Երևան, 1976 թ., № 4, էջ 56—62:

[2] Հիշատակարանները գրված են ձեռագրի 202բ էջում:

«Արցախ»-ում, Գարդման գավառի Մեծ Բանանց գյուղի նկարագրության մեջ. «Տաճարում (խոսքը Մեծ Բանանց գյուղի սուրբ Լուսավորիչ եկեղեցու մասին է—Ա. Մ.) կան հետևյալ գրչագրերը.

Ա. Աւետարան մագաղաթեայ, մեծադիր,



Մի էջ Թորոս Ռոսլինի Ավետարանից. Հիշատակարանի այն մասը, ուր հիշվում է գրիչ և ծաղկող Թորոս Ռոսլինը

ամբողջապէս գրուած գլխագրերով և առանց պատկերի, որի սկզբից և վերջից թափուած են թերթեր, կամ գողացուած են, վասնորոյ չունի յիշատակարան. միայն գրուած է բուն ընդօրինակողի գրով. **«Շնորհիւն Աստուծոյ** ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ Ա-ՄԵՆԱՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՑՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՐԲՈՑ ԽԱՉԻՆ ԵՒ ԱՂԱՒԹԻՒՔ ԱՄԵՆԱՑՆ ՍՐԲՈՑ... ԺԱՌԱՆԳԵՍՑԷ (ջնջված)»[3]: Այնուհետև բերում են մյուս հիշատակարանները, որոնք այժմ բացակայում են ձեռագրում, և որոնց կանդրադառնանք հետո:

Հետագա հիշատակագրությունները ցույց

[3] **Մակար եպս. Բարխուդարյանց**, Արցախ, Բաքու, 1895, էջ 278—279: Վերջին բառը ճիշտ չի վերծանված: Միշտը տես քիչ հետո:

են տալիս, որ ձեռագիրը շատ վաղուց է պահվել Մեծ Բանանց գյուղում և այնտեղից էլ 1974 թ. տեղի բնակիչ Ասլա Գրիգորյանի ձեռքով անցել Վահան եպիսկոպոսին:

Վեհամոր Ավետարանն ունի 26,5×33,5 մեծություն, 255 մագաղաթյա թերթ, ինչպես



Վեհամոր Ավետարանի կազմի Ա փեղկը

և մեկական մագաղաթյա թերթ պահպանակ սկզբից և վերջից: Պրակները բաղկացած են ութական թերթերից: Բնագրի սկզբից պակասում է մի պրակ: Պահպանված առաջին թերթը Մատթեոսի Ավետարանի ԼԷ տունն է: Վերջից պակասում է մի թերթ՝ Հովհաննու Ավետարանի ՄԻԲ տանից հետո:

Ընկած թերթերից մեկի վրա եղել են հետագա հիշատակագրություններ, որոնք արտագրվել են ժամանակին Մ. Բարխուդարյանցի կողմից: Ըստ այդ հիշատակագրությունների, «Աւետարանը նախ նորոգած է Թադէոս անուն ոմն միայնակեաց, ապա Այեգսանոս աբեղան ՋԲ (1453) թուին, ապա նորոգուած է ՋԿ (1511) թուին, ուր և գրուած է. **«Կամաւն Ամենակալին Աստուծոյ ես՝ Կոշ որդի Սեթիկին, թոռն Թադէոսին, Աւետարանս իմ պապեց գնուած էր. եկի, դուի արարի, էլ բարիշեցաք և սազեցաք Բ եզն ինձ ծառայութեան: Ես էլ գիր տուի ի զԱւետարանիս դուէն անցայ: Էլ ոչ ես, ոչ իմ որդին էլ դուի չանէ, ՅԺԸ հայրապետաց անիծած է...**

Մուրատ փաշէն վկայ, Ջանդարն վկայ, Մուրատ բէկն վկայ»[4]:

Ինչպես տեսնում ենք, այս նորոգման հիշատակարան չէ և թվական չունի, այսինքն կապ չունի ՋԿ (1511) թվականի նորոգության հետ:

Ձեռագրում Ղուկասի Ավետարանի վերջում պահպանվել է այդ թվականի նորոգության հիշատակարանը և կապվում է Ալեքսանոսի հետ. **«Զվերջին կազմող սուրբ**



Վեհամոր Ավետարանի կազմի Բ փեղկը

Աւետարանիս զԱլեքսանոս, սրբեղէս անուամբ միայն և գ(ործ)ով ունայն, աղաւթս յիշեցէք, և Աստուած զձեզ յիշէ, ամէն: Թիւս ՋԿ (1511)»[5]: Ուրեմն, Ալեքսանոսը կազմել և նորոգել է ոչ թե ՋԲ (1453), ինչպես նշում է Մ. Բարխուդարյանցը, այլ ՋԿ (1511) թվականին: Իսկ ՋԲ (1453) պետք է վերաբերվի Թադեոս միայնակյացին, որի մի հիշատակարանը գտնվում է նույն էջում, բայց թվական չունի: Ահա այն. **«ՋԹադէոս միայնակեցս որ ետ նորոգել զԱւետարանս և պատուական զարդարեաց իշատուկ իւր և ծնողաց իւրոց՝ հարն Յոհանէս քահանային և մուրն Հիւնեարին, և եղբարցն՝ Կոստանդին, Իրրիանոսին, Մարկոսին, Ղուկասին, Մաթէոսին, Ովանիսին և քեռրացն, ամէն: Զվերոյգրեալս յաղաւթս յիշեցէք, և որ իշէ յիշեալ լիցի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն»**[6]: Վերջում այլ գրով գրված է. **«Այլ և զպագքն մեր Թաթոս քահանայ և զամուսին իմ Սառայ, Մարկոս որդին իմ իշեցէք ի Քրիստոս»**: Թադեոսի, թոռան՝ Սեթիկի որդի Կոշին պատկանող և վերջին հիշատակարանները ՋԿ (1511) թվականին չեն վերաբերվում: Հավանականն այն է, որ Թադեոս Միայնակյացի ջանքերով ձեռագիրը նորոգվել է 1453 թվականին, իսկ նրա թոռան՝ Կոշի հիշատակարանն ընկնում է մինչև 1511 թ., մինչև Ալեքսանոս աբեղայի ձեռքով ձեռագրի կազմվելը: Ձեռագրում եղել է նորոգման մի երրորդ հիշատակագրություն ևս, որն այժմ չկա, և բերված է «Արցախ»-ում. **«Զվերջին**



Մի էջ Վեհամոր Ավետարանից (առաջին գրիչ)

նորոգիլ տուող սուրբ զԱստուածաշունչ Մեր Աւետարանիս Պանանցայ... Ճամանաթն թուին ՌՀԴ (1625) էր: Նորոգեցաւ ձեռամբ Շամախեցի Յովհաննէս երիցու...»[7]:

[4] Նույն տեղում:

[5] Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 278—279:

[6] Նույն տեղում:

[7] Այնուհետև շարունակում է. «Ով հանդիպողք, խիստ դառն, նեղ ժամանակ այսմ տարոյս Շահ ապազն բազում խան ու իշխանք ուղարկեց Վրացոտան ի քաղաքն Տպղիս՝ ընդ ձեռամբ իշխանին անուն Մովրով. սպանեց հնարաւք Ղարչղախանն, որ իշխանութեամբ ստրատեղատ էր, և այլ սիրելի խանն Յուսուբ սպանաւ ընդ նմա. մեծ դառնութիւն եղաւ

Այստեղ հետաքրքրական է, որ Ավետարանը կոչվում է «ԾԵՐ» և «ՊԱՆԱՆՑԱՑ»: Վերջինս տեղի անունն է, Բանանց գյուղը, ուր երկար տարիներ պահվել է ձեռագիրը, իսկ «Ծեր» մականունը, դեռևս այն ժամանակ, տրվել է նրան հնության համար: Եվ արդարացի է այդ որակումը:

Ձեռագրի վրա նորոգման բազմաշերտ հետքեր կան: Առաջին նորոգման ժամանակ թերթերը մաշվել, քայքայվել էին արդեն

Մի էջ Վեհամոր Ավետարանից (երկրորդ գրիչ)

արմատից, այսինքն կազմի թիկունքամասից, և նորոգվում, լրացվում են մագաղաթյա պատառիկներով: Մագաղաթյա ձեռագիրն այդ վիճակին հասնելու համար բավական շատ ժամանակ պիտի անցներ: Նորոգված կտորներից կամ կարկատաններից երկուսի վրա (3բ, 4բ) Ղուկասի Ավետարանի համաբարբառի նշումները կան, որոնց գրերը նույնն են մեր Ավետարանի համաբարբառի գրերի հետ, թվում է նույն գրչի կամ, ավելի ճիշտ, նույն դպրոցի ու ժամանակի գործ են: Նշանակում է, ձեռագիրը նորոգելիս օգտագործել են նրանից ավելի քայքայված մի այլ ձեռագիր, որը ժամանակով մոտ է եղել նրան: Երևում է նաև Հովհաննես Շամախեցու նորոգումը՝ կատարված թղթով: Նորոգել է նույնիսկ մագաղաթով նախկինում նորոգված մասերը, որոնք իրենց հերթին ավելի մաշվել ու քայքայվել էին:

Այս նշանակում է, որ առաջին նորոգումը շատ վաղուց է կատարվել, որ մաշվել է այդ աստիճան: Կազմը Ալեքսիանոսի գործն է, կաշեպատ տախտակ, կոստղապատ: Կենտրոնում խաչ է. թևերի ծայրերին և կենտրոնում՝ գունավոր քարեր: Շուրջը՝ երկաթյա խաչեր և կոստղեր, փակիչի երեք մեխերով: Երկրորդ փեղկը նույնպես կոստղած է՝ իրար մեջ գծված երկու քառանկյունների պատկերով և փականներով: Կազմն ունի դռնակ: Կազմաստառը դեղին մետաքս է:

Ձեռագիրը հիմնականում գրված է երկու գրիչների ձեռքով: Գրիչների անունները անհայտ են: Առաջին գրչից պահպանված

Մի էջ Վեհամոր Ավետարանից (երրորդ գրիչ)

երկու հիշատակագրությունների մեջ անուններ չեն հիշատակվում: Ահա դրանք. «Կատարեցաւ Աւետարանս Մատթէոսի շնորհիւն պահպանութեամբ սուրբ խաչիւն եւ աղաւ-Աստուծոյ և ողորմութեամբ սուրբ Հոգւոյն,

---

ի մէջ պարսիկ ազգին. վերջն Աստուած գիտէ թէ ինչ կուլի»: («Արցախ», էջ 279):

թիւք ամենայն սրբոց, ընդ հով(անեաւ)[8]... Տէր տուր զաւրութիւն ծառայիս քո»[9]:

«Տէր Աստուած տուր զաւրութիւն: Կատարեցաւ գլուխ Մարկոսի շնորհիւն Աստուծոյ»[10]:

Ձեռագրի հնության ամենապերճ ապացույցը ձեռագրում օգտագործված գիրն է ու գրչության արվեստը: Ձեռագիրը գրող երկու գրիչներն էլ գրել են երկաթագրով: Առաջինը ավելի ազատ է վարվել գրի հետ, արագագիր է, նույնիսկ ոճավորել է որոշ գրեր, հատկապես գլխագրերը: Այս ու այնտեղ թոչուններ ու ծաղիկներ է գծագրել: Դրանք լուսանցազարդեր չեն իսկական իմաստով: Երկրորդ գրիչը զուսպ է և գեղեցկագիր: Նրա տառերը իսկապես երկաթագիր են, զգաստ, անայլայլ: Գրության մեջ համատարած կարգով օգտագործում են «Հ» տառի այնպիսի ձև, որին առաջին անգամ այս ձեռագրում ենք հանդիպում, և որը համապատասխանում է գրերի ստեղծման մաշտոցյան սկզբունքին: Նույն սկզբունքով է ներկայանում նաև «Կ» տառաձևը, որին միայն հնագույն պատառիկներում և պահպանակներում ենք հանդիպում, որը գործածել է առաջին գրիչը: Այդ տառաձևերը պահպանվում են նաև ձեռագրում գործածված մյուս գրատեսակներում, համաբարբառների գրության և սրբագրության ժամանակ: Խիստ հնաբույր են «վ», «ծ», «ճ», «զ», «ժ», «փ» տառերը: «Փ»-ն առաջին գրչի մոտ դեռ երկու տողերի միջև է տեղավորված:

Համաբարբառն առաջին գրչի մոտ գրված է հին բոլորգրով և շղագրով, իսկ երկրորդի մոտ՝ գրչագրով (այսպես կոչված «ուղղագիծ երկաթագրով») Մատթեոսի Ավետարանի սկզբում, եզրալուսանցքի կամ կողքի լուսանցքի համաբարբառը գրված է ոչ թե կողք-կողքի, այսինքն, ոչ թե ժա, այլ վերից վար՝ $\frac{ժ}{ա}$ կամ $\frac{ճի}{բ}$: Մեր կարծիքով կարող էր այդպես գրվել յոթերորդ դարի երկրորդ կեսում, երբ Ճիրակացին մաշտոցյան այբուբենը իննյակներով ձախից աջ հորիզոնական դասավորության փոխարեն, թվաբանական գործողությունների համար կարգեց վերից վար իննյակների գրության ձև՝ միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր կարգով, որից նմուշներ է պահպանվել ձեռագրերում «Այբուբեն Անանիայի» կամ «Այբ գիրն Անանիայի» վերտառությամբ: Հավանաբար դրա արտահայտությունն է համաբարբառների այդ կարգի գրությունը:

Ձեռագրում անկանոն է գլխավոր Ավետարանների նշանակումը: Առաջին գրչի մոտ այն համարյա բացակայում է և նշանակված են հետագայում, իսկ երկրորդ գրչի մոտ նշանակվածները տեղ-տեղ չեն համապատասխանում հետագայում գրված ձեռագրերի գլխավոր Ավետարաններին, որոնք նշվում են զարդագրերով, և իրենց դիմաց ունեն լուսանցազարդեր:



Վեհափառ Հայրապետի ընծայականը Վեհամոր Ավետարանի ընծայման մասին և Վահան եպս. Տերյանի ընծայականը՝ Ավետարանը Վեհամոր հիշատակին նվիրելու մասին

Ձեռագրում գործածվում է գրչագիր, բոլորգիր և շղագիր գրատեսակները, ինչպես հնագույն Լազարյան Ավետարանում՝ գրված 887 թվականին: Գրչագիր, ավելի շուտ երկաթագրախառն է երրորդ գրչի գրած երեք էջերը (209բ, 235ա, 250ա): Սույն գրատեսակը գործածված է նաև համաբարբառներում և սրբագրություններում: Գրության մեջ բառանջատում չկա, հետևաբար գոյություն չունի տողադարձի կանոն: Հաճախ նոր տողից չի գրվում նաև նոր տունը (էջ 8ա, Մատթէոս 4բ), երևույթ, որին հետագայում երբեք չենք հանդիպում, քանի որ յուրա-

[8] Հաջորդ բառերը քերված են:

[9] Ձեռագիր № 10680, էջ 70բ:

«Արցախ»-ում այս տողը վերծանված է «ժառանգեսցէ», որը ճիշտ չէ (տես անդ, էջ 278—279):

[10] Մատենադարան, ձեռ. № 7040, էջ 280ա:

քանչյուր տուն համարակալվում է լուսանցքում:

Կան գրության հնագույն ձևեր, որոնք չունեն մեր հնագույն՝ Թ, Ժ դդ. Ավետարանները, ինչպես, օրինակ. «Եւ ուղեղ արարէք զշաւեղս նորա» (71ա), «ովմն» (119բ), «փաւխանակ» (120բ), «մոիոն» (3բ) և այլն: Պատվագրված են միայն տերունական անունները, հանդիպում են պատվագրության հազվադեպ ձևեր, «Աստուծոյ» և «Տեառն» բառերի, «Այ» և «Տն» պատվագրությունների փոխարեն գործածված են «Աոյ» և «Տրն» ձևերը[11]:

Ձեռագրի հնության կարևոր ապացույց է նաև կետադրությունը: Երեք գրիչների մոտ էլ կետադրության բոլոր նշանների պարտականությունը կատարում է երկու տողագծերի կենտրոնում (տառի մեջտեղին հավասար) դրված միակ կետը, որը մերթ նշանակում է վերջակետ, մերթ միջակետ, մերթ ստորակետ, առանց տեղը փոխելու: Հնագույն Մլքե թագուհու (862 թ.) Ավետարանում (որքան հնարավոր եղավ դատել հրատարակված մի էջից) գործածված է երկու կետ (այսինքն մի կետը դրվում է երկու տեղ), իսկ Լազարյան Ավետարանի մեջ՝ երեք կետ (մի կետը՝ երեք տեղ): Վեհամոր Ավետարանի կետադրությունն ավելի մոտ է Անանիա Ծիրակացու «Խրախճանականք»-ի պատառիկի կետադրությանը, որը 7-րդ դարի հնություն ունի[12]: Այս բոլորը թույլ են տալիս ենթադրելու, որ Վեհամոր Ավետարանը մեզ հասած հայերեն հնագույն ամբողջական ձեռագրերից ամենատարեցն է, ամենածերը, որի հնությունը հասնում է մինչև 7-րդ դար և արժանի է հատուկ, մանրախույզ քննության:

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Մատենադարանի
գլխավոր ավանդապահ

[11] Մատենադարան, ձեռ. № 10680, էջ 119ա և 39ա:

[12] **Ա. Մաթևոսյան,** Նորահայտ պատառիկներ Անանիա Ծիրակացու թվաբանության դասագրքից, ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր», 1974, № 6, էջ 65—76:



«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿԸ

Գովելի պետք է համարել, որ «Արարատ»-ի մատենագիտական ցանկից հետո Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հրամանով մեր մշակութային սեղանին է դրվում նաև «Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը: Գովելի է ո՛չ միայն կատարված աշխատանքի արժեքավորության, այլև մեր մշակութային կյանքում կարևորություն ներկայացնող գործի սկզբնավորումն արմատավորելու իմաստով:

Հայտնի է, որ, ունենալով պարբերականների հրատարակման մեծ և վաղեմիություն ունեցող ավանդներ, մենք չունենք այդ ավանդներին զուգակշռող պարբերականների մատենագիտական ցանկեր (որքան մեզ հայտնի է, «Էջմիածին» ամսագրի «Մատենագիտությունը» թվով վեցերորդն է): Ահա՛ նաև այս իմաստով է, որ ընդգծվում է հրապարակված աշխատության նշանակությունը:

Որևէ ամսագրի մատենագիտական ցանկ արժեքավոր է նախ և առաջ այնքանով, որքանով մեծ է տվյալ պարբերականի ստանձնած դերը ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացման գործում: Բավական է ընդհանուր գծերով քննարկման դնել «Էջմիածին» ամսագրում բարձրացված հարցերը, չափել այդ հարցերի կշիռը՝ ասելու համար, թե որքանով է արդարացված այս աշխատության ձեռնարկումը:

Մենք «Էջմիածին» ամսագրի կատարած դերին, 30-ամյա գործունեությանը, այնտեղ արծարծված հարցերի կարևորությանն ու խորությանը չենք անդրադառնա, որովհետև մեր թվարկած ու նաև չթվարկած հատկանիշների մասին պատշաճ մակարդակով ասված է աշխատության խմբագիրներ Արթուն Հատիտյանի ու Սուրեն Քոլունջյանի **«Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը»** խորագրով ծավալուն ու հրմտալից առաջաբանում: Միայն իբրև ընդհանուր հետևություն պետք է արձանագրենք, որ ծանրակշիռ է այս ամսագրի դերն ու արգասավոր՝ նրա անցած 30-ամյա ուղին, ուստի և այս իմաստով ևս միանգամայն տրամաբանված է սույն «Մատենագիտության» հրապարակ գալը:

«Մատենագիտությունը գեղեցիկ գործ է,— ասել է երևելի մտածողներից մեկը,—միայն այն դեպքում, երբ դրանով զբաղվում են լրջորեն»:

Որոշելու համար, թե ինչպիսի լրջությամբ է կատարված «Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը, պետք է պարզենք, թե գոյություն ունեցող սկզբունքներից որի՞ն է նախապատվություն տվել կազմող-հեղի-

նակը, ինչքանո՞վ է այն համընկնում ամսագրի բնույթին և ի՞նչ չափով է բավարարում օգտվողի պահանջմունքները:

Կազմողի որդեգրած սկզբունքը, որը հայտնի է **ժամանակագրական-այբբենական** անունով, կիրառված է ո՛չ թե քմածին կերպով, այլ պայմանավորված է ամսագրում զետեղված նյութերի բնույթով: Տվյալ դեպքում այն, ինչ ամբարված է սույն «Մատենագիտության» մեջ, հստակ, համակողմանի ու ամբողջական կերպով արտացոլում է ամսագրի 30 տարիների ընթացքում կուտակած պաշարը: Հեղինակն այս նույն սկզբունքով է կազմել նաև «Արարատ» ամսագրի մատենագիտական ցանկը: Ուրեմն կարող ենք խոսել ո՛չ միայն կիրառած սկզբունքը ճիշտ լինելու, այլև նախօրինակի միջոցով կյանքում քննություն բռնած լինելու մասին:

«Կազմողի կողմից» խորագիրը կրող հատվածում մատենագետ Սեդա Կոծինյանը բացատրություններ է տալիս իր կատարած աշխատանքի բնույթի, կիրառած սկզբունքների ու հարակից հարցերի մասին:

Բուն մատենագիտության մեջ շուրջ 5300 միավոր նկարագրությամբ նա ըստ ժամանակագրության բերում է ամսագրի 360 համարներում ընդգրկված նյութերի այբբենական ցանկը: Այդ կարգացանկում յուրաքանչյուր մատենագիտական միավոր ունի իր հերթական թվահամար հոդվածի հեղինակի ազգանուն-անունը, վերնագիրը, ենթավերնագրային տեղեկությունները, լրացուցիչ բացատրությունները, հրատարակության տարին, ամսագրի համարը և էջը, որոնք սպիտակ ու թավ շարվածքով տարբերակված են միմյանցից:

«Մատենագիտություն»-ից օգտվողի համար առաջին իսկ հայացքից պարզ է դառնում, թե ըստ տարիների ի՞նչ նյութեր են հրատարակվել «Էջմիածին» ամսագրում, և ի՞նչ իրադարձություններ են կատարվել Մայր Աթոռում: Օգտվողի աշխատանքը դյուրացնելու և նրան ճիշտ կողմնորոշելու նպատակով կազմողը քառակուսի փակագծերի մեջ լրացնում է հեղինակների անվան կամ ազգանվան կիսատ մնացած շարունակությունները, տալիս է հակիրճ, բայց շատ բնորոշ ու բնութագրող տեղեկություններ հոդվածում շոշափված հարցերի վերաբերյալ: «Մատենագիտության» գիտական մակարդակը ապահովելու նկատառումով կազմողը պատմա-բանասիրական հոդվածների նկարագրություններում (երբ հարցը վերաբերում է ձեռագրերի ուսումնասիրությանը) վերնագրերին առընթեր տալիս է նաև բնագրերի վերնագրերը և ձեռագրերի սկզբնատողերը, որն ավելի է բարձրացնում «Մատենագիտության» ընդհանուր արժեքը: Յուրաքանչյուր դեպքում նա տալիս է նաև լրացուցիչ տեղեկություններ ամսագրում զետեղված նկարների մասին և այլն:

Կարգացանկին հետևում է **«Ցանկեր»** ընդհանուր խորագիրը կրող բաժինը, ուր միմյանց հաջորդում են. **«Առարկայական ցանկ»**, **«Վանքեր-եկեղեցիներ»**, **«հեղինակային և անձնանունների ցանկ»** ու **«Տեղանունների ցանկ»** ենթաբաժինները: Այստեղ ավելի ընդգծված ձևով է հանդես գալիս Ս. Կոծինյանի կատարած աշխատանքի ստեղծագործական մոտեցումն ու գիտական բնույթը:

Կարգացանկի մեջ ընդգրկված նյութերը

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

(1944—1973)

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ամբողջովին առարկայական ցանկում դասդասված են ըստ թեմաների ու դրված սիստեմատիկ առարկայական դասավորությամբ: «Մատենագիտություն»-ից օգտվողը կրոնա-եկեղեցական, դավանաբանական, բարոյագիտական, պատմա-բանասիրական, հայագիտական ու այլ թեմաների վերաբերյալ, այբբենական կարգով միմյանց հաջորդող ենթավերնագրերի տակ, կարող է դյուրությամբ տեղեկություններ քաղել իրեն հետաքրքրող հարցերի վերաբերյալ, կարող է պարզել, թե ի՞նչ նյութեր են հրապարակվել «Էջմիածին» ամսագրի 30 տարվա թվահամարներում՝ իր համար անհրաժեշտություն ներկայացնող թեմաների մասին:

Նույնպիսի մոտեցումով են կազմված և բանասերի բծախնդրությամբ իրականացված նաև մյուս օժանդակ ցանկերը: «Վանքեր-եկեղեցիներ» բաժնից օգտվողը կարող է քաղել առատ տեղեկություններ վանքերի ու եկեղեցիների մասին տպված ուսումնա-

սիրությունների, ճարտարապետական ու շինարարական-վերանորոգման աշխատանքների, ինչպես նաև եկեղեցիներում ու վանքերում կատարված արարողությունների ու հանդիսությունների վերաբերյալ:

Գործնական նշանակություն ունի նաև «Հեղինակների և անձնանունների ցանկ» ենթաբաժինը: Բառացիորեն բոպեների ընթացքում օգտվողը կարող է պարզել, թե իրեն հետաքրքրող հեղինակն ի՞նչ հոդվածներ է հրապարակել «Էջմիածին» ամսագրի 30 տարիների ընթացքում: Առանձին դեպքերում այս ցանկում հիշատակվում են նաև այն անձանց անունները, որոնց մասին խոսք կա հոդվածներում և որոնց անունները կազմողի կողմից իբրև անհրաժեշտ լրացում մտել են կարգացանկի մեջ:

Բավարարվենք այսքանով...

* * *

Այս նշանակո՞ւմ է արդյոք, որ «Էջմիածին» ամսագրի «Մատենագիտական» ցանկում չկան թերություններ:

Իհարկե ոչ...

Մատենագիտության հատկանիշներից մեկն էլ այն է, որ կարողանա բավարարել օգտվողի բաղադրյալ պահանջմունքները: Ասենք, որևէ մեկը ցանկանում է իմանալ, թե **Հակոբ Սիրունին 1966 թվականի ընթացքում ի՞նչ է հրատարակել «Էջմիածին» ամսագրում:** Տրամաբանական է, որ նա պետք է թերթատի «Մատենագիտության» այդ թվականին վերաբերվող էջերը. և ինչ, կարգացանկում չկա Հակոբ Սիրունու անունը: Մինչդեռ իրականում այդպես չէ. «Էջմիածին» ամսագրի 1966 թվականի հունվար-հոկտեմբեր ամսատետրակներում պարբերաբար հրատարակվել է նրա **«Կոմիտասին հետ»** խորագրով հուշագրությունը: Պարզվում է, որ այս կարգի տեղեկություններ ստանալու համար օգտվողը պետք է դիմի ո՛չ թե **կարգացանկի,** այլ **օժանդակ ցանկերի** օգնությանը, որովհետև ըստ որդեգրած սկզբունքի շարունակաբար հրապարակվող նյութերը ի մի են հավաքվում, տարվում սկիզբ և բոլորը միասին դրվում առաջին անգամ մատենագրվող կարգացանկի տակ: «Հեղինակների և անձնանունների ցանկում» (էջ 279) Սիրունու դիմաց դրված է 17 միավոր թվահամարներ, այդ թվերի հետքերով օգտվողը պետք է թերթատի կարգացանկի էջերը և, լրացուցիչ աշխատանքից հետո, 1965 թվականի տակ (էջ 182) կհայտնաբերի այն, ինչ պետք է լիներ 1966-ի մեջ: Սա դեռևս դժվարության փոքրագույնն է: Իսկ եթե օգտվողը ցանկանում է իմանալ, թե «Հուշագրության» ո՞ր գլուխներն են տպագրվել 1966 թվականի համարներում, ապա կհամոզվի, որ «Մատենագիտությունն» այս հարցին գոհացնող պատասխան չի կարող տալ: Այստեղից էլ Սիրունու հուշերից Ձեզ հետաքրքրող «Հայ խազերն ու իրենց գաղտնիքը» հատվածի տեղն իմանալու համար դուք չեք կարող օգտվել «Մատենագիտությունից» և պետք է թերթատեք ամսագրի հինգ տարվա (1965—1969) թվով 28 համարները: Կըրկնում ենք, որ այս մոտեցումը ո՛չ թե կազմողի, այլ նրա որդեգրած սկզբունքի թերությունն է, որի խախտումն ավելի շահեկան կլիներ, քան պահպանումը:

Նշենք մի ուրիշ թերություն ևս, որը բխում է կազմողի աշխատանքից: Անվանացանկում Ռաֆֆու և Արամ Ռաֆֆու մասին եղած հղիչ թվերը չեն տարանջատված միմյանցից և Ռաֆֆու մասին եղած տեղեկությունները ամփոփված են Արամ Ռաֆֆու անվան տակ:

Արդյոք կա՞ն նաև ուրիշ թերացումներ: Անշուշտ կլինեն: Բայց մի՞թե այս ստվարածավալ ու արժեքավոր աշխատության մեջ կարևորը եղած ու ենթադրվող մանր ու անշան թերություններն են...

Եթե այս ամենը դնենք գնահատման նժարի վրա, ապա վստահորեն կարող ենք ասել, որ կազմողը «Մատենագիտության» ստեղծման աշխատանքներին մոտեցել է խստապահանջ լրջությամբ, իսկ սա իր հերթին նշանակում է, որ կատարված աշխատանքը հիմնականում գոհացնում է մատենագիտության հանդեպ ներկայացվող ընդհանուր պահանջարկին: Եթե սրա վրա ավելացնենք նաև այն, որ հիմնականում արդարացվում է նաև օգտվողի ակնկալությունները, ապա իբրև եզրակացություն պետք է ոչ միայն անհրաժեշտ համարենք այս նախաձեռնության հրապարակ գալը, այլև գովելի՝ կատարվածը:

«Էջմիածին» ամսագրի «Մատենագիտությունը» կարող է իր արժանավոր տեղն ունենալ մեր մշակութային ընդհանուր գանձանակի մեջ:

Խ. ԱՂԱՋԱՆՅԱՆ



ՄԱՀ ՀՆԱԳԵՏ ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ

(1907—1976)

Երկարատև և ծանր հիվանդությունից հետո, հոկտեմբերի 21-ին, 69 տարեկան հասակում, վախճանվեց պատմական գիտությունների դոկտ.-պրոֆ., մեծավաստակ հնագետ, գիտության վաստակավոր գործիչ և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամ Կարո Գրիգորի Ղաֆադարյանը:

Հայագիտությունը ծանր կորուստ կրեց:

Մայր Աթոռը և անձամբ Հայոց Հայրապետը, Որը մեծ բարեկամությամբ կապված էր վաստակաշատ հնագետի հետ, հարազատորեն և հայրաբար բաժանեցին հայ ժողովրդի վիշտն ու հայ մշակույթի կրած մեծ կորուստը:

Հանգուցյալը ծնվել է 1907 թվականին Ախալցխա քաղաքում: Նրա ծնողները ժամանակին Ծուղրութ գյուղի բնակիչներ էին, թուրքական յաթաղանից ազատվելու համար Կարինի շրջանից փախած հայ գաղթականների զավակներ:

Կ. Գ. Ղաֆադարյանն իր միջնակարգ կրթությունը ստացել է Ախալցխայի հայկական դպրոցում: 1931-ին ավարտելով Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, աշխատանքի է անցնում Էջմիածնի Մատենադարանում, որտեղ և ծնվում են նրա հայագիտական առաջին երախայրիքները, և այնուհետև, մինչև իր կյանքի վերջը, Ղաֆադարյանը նվիրվում է ամբողջությամբ Հայաստանի հնագիտության ուսումնասիրությանը:

Հանգուցյալը 45 տարի շարունակ սրտագին ջանքեր է գործադրում Հայաստանի հնագիտական ու ճարտարապետական հուշարձանների հաշվառման ու գիտական ուսումնասիրության բնագավառում՝ հաճախ անձամբ ղեկավարելով մի շարք արշավախմբերի աշխատանքները:

Կ. Գ. Ղաֆադարյանի անվան հետ են

կապված մանավանդ Հայաստանի խոշորագույն քաղաքամայր Դվինի՝ 31 տարի շարունակ տևող պեղումները, որոնց նա նվիրել է երկու հատոր մեծարժեք ուսումնասիրություններ (երկրորդ հատորը՝ ձեռագիր):

1940 թվականին Կ. Գ. Ղաֆադարյանը նշանակվել է Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն և շնորհակալ աշխատանքներ կատարել Հայաստանում թանգարանային գործի կազմակերպման և ղեկավարման բնագավառում:

1959 թվականից մինչև իր մահը հանգուցյալը գլխավորել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջնադարյան բաժնի աշխատանքները:

Բազմակողմանի և բեղուն է եղել Կ. Գ. Ղաֆադարյանի գրիչը: Նա հեղինակ էր հայ ժողովրդի պատմության, հնագիտության, մշակույթի տարբեր բնագավառներին նվիրված բազմաթիվ ու արժեքավոր մենագրությունների:

1956 թվականից սկսած Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի նախաձեռնությամբ Մայր Աթոռին առընթեր կազմված հայրենի անվանի ճարտարապետների հանձնաժողովի պատվական ու նվիրյալ անդամներից մեկն էր Կ. Գ. Ղաֆադարյանը, որն իր ճարտարապետ ընկերների հետ միասին, ինքնաբուխ նվիրումով և հայ մարդու մեծ սիրով, իր վրա էր վերցրել Մայր Աթոռի, վանքերի, եկեղեցիների վերանորոգչական և ընդհանրապես շինարարական մեծ ձեռնարկների մասնագիտական ղեկավարությունը՝ մարմին տալու շինարար Հայրապետի կառուցողական ծրագրերին:

Հայոց Հայրապետը Կ. Գ. Ղաֆադարյանի մահվան առթիվ նրա ընտանիքին և հարազատներին ուղարկեց 22 հոկտեմբեր 1976 թվակիր հետևյալ ցավակցական հեռագիրը.

«Խոր վշտով Ձեզ ենք ներկայացնում Մեր ցավակցությունները՝ Ձեր հարազատի՝ մեծանուն պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի վաղաժամ մահվան առթիվ: Հանգուցյալը բաժանվում է երկրային կյանքից գիտական ու հայրենասիրական մեծ ծառայություններով, որ երբեք չեն մոռացվելու: Երախտագիտությամբ պիտի հիշվի նաև նրա անձնվեր աշխատանքը՝ հոգուտ սուրբ Էջմիածնի և մեր պատմական սրբավայրերի վերականգնման նվիրական գործում:

Լո՜ւյս և օրհնությո՜ւն Կարո Ղաֆադարյանի անկորնչելի գիտական վաստակին:

Լու՜յս և օրհնությո՜ւն նրա ազնիվ ու արդար հոգուն»:

Հարգա՜նք մեծանուն գիտնականի վաստակին, ազնիվ ու հայրենասեր հայ մարդու հիշատակին:

Ա. Հ.



ՄԱՀ ԿԱՄՍԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

(1904—1976)

Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, հոկտեմբերի 23-ին, մահացավ աշխարհագրական գիտությունների թեկնածու, հոգևոր ճեմարանի հայրենագիտության դասախոս, դոցենտ Կամսար Մելքոնի Ավետիսյանը:

Հանգուցյալը ծնվել է 1904 թվականին Հին Բայազետում: 1915 թվականին պատանի Կամսարը ծնողների հետ տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ և իր նախնական կրթությունը ստանում Ներսիսյան դպրոցում, ապա Երևանում, Բանվորական համալսարանում:

Կ. Մ. Ավետիսյանն աշակերտական գրասեղաններից բուռն սեր է ցուցաբերել աշխարհագրական առարկայի նկատմամբ և հետագայում իր ողջ կյանքը նվիրաբերել այդ գիտությանը:

1932-ին ընդունվել է Երևանի համալսարանի աշխարհա-երկրաբանական ֆակուլտետ, որն ավարտելուց հետո շուրջ 40 տարի դասախոսական աշխատանք կատարել Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, գյուղատնտեսական տեխնիկումում և հեռակա մանկավարժական ինստիտուտում:

Կ. Մ. Ավետիսյանը 1969—1974 թվականներին հայրենագիտություն է դասավանդել նաև հոգևոր ճեմարանի լսարանական բաժնում:

Հանգուցյալն իր ողջ էությամբ նվիրված է եղել իր սիրած մասնագիտությանը: Նրա նախասիրած ժանրն աշխարհագրական գիտաճանաչողական գրականությունն էր: Նրա գրչին են պատկանում աշխարհագրական բազում գրքեր և մամուլում հրապարակված հոդվածներ:

Կ. Ավետիսյանի մահվան տխուր առիթով

Վեհափառ Հայրապետը նրա սգակիր ընտանիքին և հարազատներին ուղարկեց 26 հոկտեմբեր 1976 թվակիր հետևյալ ցավակցական հեռագիրը.

«Այսօր, երբ Կամսար Ավետիսյանի հոգին այնքան վաղաժամ բաժանվում է Ձեզանից և այս անցավոր աշխարհից, Մենք վշտահար սրտով հայտնում ենք Ձեզ Մեր խորագագաց ցավակցությունները և աղոթում հանգուցյալի բարի հոգու հավիտենական խաղաղության համար:

Կամսար Ավետիսյանն իր մանկավարժական ու գրական բեղուն գործունեությամբ մնալու է որպես պայծառ օրինակ բոլոր նրանց համար, ովքեր նվիրվում են մեր ժողովրդի նոր սերնդի դաստիարակության ազնիվ աշխատանքին:

Հարգա՜նք և օրհնությո՜ւն նրա անբիծ կյանքին ու նրա անմոռանալի վաստակին»:

Ազնիվ ու աշխատասեր գիտնականի, հայրենասեր հայ մարդու, բարի ու հոգատար ընկերոջ հիշատակը վառ կմնա նրա աշխատանքի ընկերների, բարեկամների և ուսանողների սրտերում:

Ա. Հ.

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 401
ՄԱՏԵԱՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԻ

Թերթերը՝ 227:—**Պրակները՝** 19, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ը՝ 10, Թ՝ 11 և ԺԹ՝ 14 թերթից են:—**Մեծությունը՝** 34×22,5×3,5 սմ.:—**Ելյութը՝** դեղնած հաստ թուղթ:—**Կազմը՝** հասարակ բարակ ստվարաթուղթ: Կազմի վրա կա 26 համարը:—**Պահպանակները՝** բարակ սպիտակ մի թերթ սկզբում:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** Միապուն:—**Դատարկ թղթերը՝** 224բ—227բ:—**Տողերը՝** 33—56, անկանոն:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** խառը, զանազան տեսակի և չափի նոտրգրեր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչները՝** մի քանիսն են, որոնց անունները անհայտ են:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 17—18-րդ դարեր: **Վայրը՝** անհայտ:—**Մանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Ստամբուլից բանասեր և պատմական գիտությունների թեկնածու Հակոբ Ս. Անասյանի ձեռամբ 1973 թ. սեպտեմբեր ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Վեցերորդ մատեան
Ամենից գրեանցն Արիստոտէլի.
Պատկանեալք առ ճանաչումն կենդանեաց,
ընդ զանազան մեկնութեանց ի նոյնսն:
Ավերիոսի Քոստուպէնսիոյ.
լուծմանցն ընդդիմութեանց Միքայէլի Անկէլոսի
Զիմաստացոյ. յատուկ տեղիս առակցեալք, որոց զմակագիրսն, զթիւն և զկարգն պատմէ ստորև:
Ի Վենետիկ առընթեր Իւնթոսի
ՌԵՃԷԴ (1574 թ.—Ն. Մ.):

Թ. 1բ.—Թէոդորոսի Գազայի Թեսաղոնիկեցւոյ ի գրեանս
Արիստոտէլի զկենդանեացս:
Առ Նիկողայոս Հինգերորդ մեծագոյն Քահանայապետն.
Յառաջաբանութիւն:

Թ. 4բ.—Զթէոդորոս Գազայէ՝ Հեռմօլայոս բարբարոս յառաջաբանութեան Թէմիսցիոսի մեկնութեան, առ չոր(ր)որդ Սիսթոս մեծ Քահանայապետն զայս գրէ, զմեծ և զանբաղդատելի վնաս ոչ նախ արարաք մեծագոյն քահանայապետ ի Թէոդորոս Գազայ, որ զլունական և զամենայն լաթինական արսն այսու պարգևաւ գրելոյ և թարգմանելոյ յաղթեաց: Այս եթէ երկարապէս ապրից իւր զլաթինական լեզուն ևս մասն ինչ ճոխացուցանէր, որ և արար յայսոսիկ գրեանս բացարձակապէս զկենդանեացն Արիստոտէլին և մեկնուդեանցն զտոհմակաւոր, այս ինձ մի ստոյգ ինքեամբ հնութեամբ տեսանեցայ, զայս ինձ, որում հետևեցայ յառաջադրեցի, ի գրեանցս սորին օգնեալ իմ և խոստովանիմ և քարոզեմ: Զայս ես ոչ մեծաւ ջանիւ հետաքրքրութեամբ ընթերցայ, քան Թուլիոսի, Փլինիոսի, Քոլումէլոսի, Լատօնոսի, Սենէքայի, Սիսուլէոսի և այլոց, զորս յայսմիկ սեռի մեկնութեան մտադրութեամբ ընթեռնուլ հարկաւոր է:

Թ. 5ա.— Արիստոտէլի Ստագիրացւոյ.
զպատմութենէ կենդանեաց.
Գիրք Առաջին.
Ի Թէոդորոս Գազայ թարգմանչէ:
Որո՞վք կենդանիքն ի մէջ ինքեան տարբերին, և որովք համաձայնին և նոցին զանազանութիւն բնութեան:

(Շարունակելի)

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է-ից և Ը—Թ-ից:

ՑԱՆԿ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1976 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տ. Վաչե եպիսկոպոս Հովսեփյանին արքության պատիվ շնորհելու մասին, Ե 3:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը «Վարդանանց Ասպետներ» կազմակերպության հիմնադրության 60-ամյակի առթիվ, Ե 5:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը անվանի երգչուհի Լուսին Ամարային՝ նրա բեմական գործունեության 25-ամյակի առթիվ, Ե 7:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը հրապարակագիր և գրող Սամվել Թումայանին, Ե 9:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը Մայր Աթոռի բարերար տիար Հարություն Ակինյանին, Զ 5:

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 9:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Ա 12:

Նոր տարվա առթիվ փոխանակված հեռագրեր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև, Ա 14:

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Դ 6:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Դ 9:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Վենետիկի Մխիթարյան ուխտի ընդհանուր արբահայր Պողոս վարդապետ Անանյանին, Դ 13:

Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը՝ ուղղված Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքային կոմիտեի նստաշրջանին, Դ 22:

Պրոֆ. Գերհարդ Բասսարակի հարցազրույցը Նորին Սրբություն Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի հետ, Դ 31:

Վեհափառ Հայրապետի նամակը Հայկական բարե-

գործական ընդհանուր միության յոթանասնամյակի առթիվ, Զ 3:
Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գրիգոր Ա. Արզումանյանի մահվան տխուր առիթով, ԺԲ 16:
ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ—Խոսք մեր ժողովրդին, ԺԲ 17:
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Նորին Գերազանցություն կարդինալ Ժան Վիլլեբրանդսին, ԺԲ 19:

Բ. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Հաղորդագրություն (Սրբազույն մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակը նշելու մասին), Բ 3:
Հայտարարություն (Հայ կաթոլիկ հոգևորականներից և Լևոնյան վարժարանի ղեկավարության անդամներից ոմանց կողմից մայր հայրենիքը լքողներին հովանավորողի դերում հանդես գալու ու դավանափոխության աշխատանքներ տանելու մասին), ԺԲ 22:
Լուսաբանություն (Հռոմում Լևոնյան վարժարանի ղեկավարության կողմից մայր հայրենիքը լքողներին ցույց տրվող աջակցության մասին), ԺԲ 23:

Գ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետի այցելությունը Երևանի ս. Սարգիս եկեղեցի, Բ 21:
Ա. Հ.—Վեհափառ Հայրապետը Փարիզում և Ժնևում, Է 3:
Վեհափառ Հայրապետի այցելությունը Շիրակի թեմ, ԺԲ 24:

Դ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ամանորի և սուրբ Ծննդյան խոհեր, Ա 6:
Փոխան գրախոսականի, ԺԲ 3:

Ե. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում, Ա 3:
Հայրապետական հանդիսավոր ս. պատարագ և քարոզ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ Ծննդյան տոնի առթիվ, Ա 16:
Ա. Հ.—Ամանորյա և սուրբ Ծննդյան հանդիսություններ Մայր Աթոռում, Ա 17:
Ընդունելություն Վեհարանում՝ ի պատիվ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի, Ա 21:
Եկեղեցական բեմ. լուրեր, Ա 23, Բ 24, Գ 39, Դ 27, Ե 11, Զ 37, Է 8, Ը—Թ 17, Ժ—ԺԱ 108, ԺԲ 42:
Սրբոց Վարդանանց տոնն ու Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում, Բ 14:
Վեհափառ Հայրապետի քարոզը (Երևանի ս. Սարգիս եկեղեցում), Բ 21:
Ա. Հ.—Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը Մայր Աթոռում, Գ 3:
ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԼԸԸՆԾՅԱՆ—Մայր Աթոռի և ներքին թեմերի եկեղեցականների հավաքը սրբոց Ղևոնդյանց և Վարդանանց տոների առթիվ, Գ 33:
Մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն, Գ 36:
Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում, Դ 3:
Հայրապետական ս. պատարագ և քարոզ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ, Դ 11:
Ապրիլյան եղեռնի 61-րդ տարելիցի նշումը Մայր Աթոռում, Դ 26:
Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդի նշանակում, Դ 30:
Պարգևատրումներ (Վեհափառ Հայրապետի կողմից կոնդակով մի շարք քահանաների լանջախաչ և ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհելու մասին), Զ 9:
Վեհափառ Հայրապետի քարոզը Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, Է 4:
ՄԻՍԱՔ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ—ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի երիտասարդաց կազմակերպության անդամները Մայր Աթոռում և հայրենիքում, Է 14:
Եպիսկոպոսաց ձեռնադրություն Մայր տաճարում, Ժ—ԺԱ 100:
Վիլյամ Սարոյանը Մայր Աթոռում, ԺԲ 40:
Հայրապետական գնահատություն (Վեհափառ Հայրապետի կողմից մի շարք քահանաների լանջախաչ և ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհելու մասին), ԺԲ 44:

Զ. ՀՈԳԵՎՈՐ ՇԵՄԱՐԱՆՈՒՄ

Ավարտաճառերի բանավոր պաշտպանություն հոգևոր ճեմարանում, Ե 14:
Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում, Զ 10:
Հոգևոր ճեմարանի վերաբացումը, Ը—Թ 20:

Է. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ—Ղևոնդյանք.—Հովսեփ կաթողիկոս, Սահակ և Թադիկ եպիսկոպոսներ, Ղևոնդ, Մուշե, Արշեն, Սամվել, Աբրահամ, Խորեն քահանաներ, Քաջաջ և Աբրահամ սարկավագներ, Բ 4:—Վարդանանք, Բ 6:
ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ—Շարական սրբոց Վարդանանց, Բ 10:
ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ—Ս. մյուռոնի օրհնությունը, Բ 26:

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ—Ընդհանուր ակնարկ Ավագ շաբաթվան վրա, Դ 15:
ԶԱՎԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆ—Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր փառավոր հաջողությունը, Դ 33:
—Շնորհաց վարդապետություն Պողոս առաքյալի, Զ 17:
Վարագույրը (Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի «Հեթանոսաց Առաքյալը» գրքից հատված), Զ 14:
Աղօթք սրբալոյս միւռոնի օրհնութեան, Ը—Թ 14:

Ը. ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

Վեհափառ Հայրապետի խոսքը Վեհարանում՝ Իր գահակալության քսանամյակին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ, Ժ—ԺԱ 3:
ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանի ողջույնի խոսքը, Ժ—ԺԱ 9:
ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնների գործերի խորհրդի նախագահ պրն. Վլադիմիր Կուրոյեդովի շնորհավորական հեռագիրը, Ժ—ԺԱ 11:
Գերագույն հոգևոր խորհրդի զեկուցագիրը Վեհափառ Հայրապետի քսանամյա գործունեության մասին, Ժ—ԺԱ 12:
Հաղորդագրություն (Սրբալույս մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակի առթիվ), Ժ—ԺԱ 27:
ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ
Հանդիսություններ Մայր Աթոռում՝ սրբալույս մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակի առիթով, Ժ—ԺԱ 31:
Օրհնություն սրբալույս մեռոնի, Ժ—ԺԱ 38:
Հոբելյանական հանդիսավոր նիստ, Ժ—ԺԱ 47:
Պաշտոնական ընդունելություն, Ժ—ԺԱ 75:
Այց Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան, Ժ—ԺԱ 81:
Հոբելյանական խաչքարի բացում Վեհարանի բակում, Ժ—ԺԱ 84:
Եպիսկոպոսաց խորհրդակցական ժողովի գումարում Մայր Աթոռում, Ժ—ԺԱ 86:
Երևանի ս. Սարգիս վերակառուցված առաջնորդանիստ եկեղեցու նավակատիքն ու օծումը, Ժ—ԺԱ 89:
1976 թվականին սրբալույս մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակի հանդիսություններին մասնակցող պատգամավորների ցուցակ, Ժ—ԺԱ 98:

Թ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքային կոմիտեի նստաշրջանն ԱՄՆ-ում, Դ 21:
Խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված կրոնական գործիչների համաշխարհային կոնֆերանսի նախապատրաստական կոմիտեի ընդլայնված նիստը Մոսկվայում, Դ 24:
Հանուն հավերժ խաղաղության, Զ 31:
ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ—«Կրոնական գործիչները հանուն կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների» հաստատման թեմայով համաշխարհային կոնֆերանսի նախապատրաստական կոմիտեի աշխատանքները Մոսկվայում, Ժ—ԺԱ 105:

Ժ. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ—Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հինգերորդ համաժողովը, Ա 54:—Մայր Աթոռի պատվիրակները Եգիպտոսում, Ա 61:
Այցելություն մալաբար ուղղափառ եկեղեցուն, Ե 58:
ԶԱՐԵՀ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐՈՆՅԱՆ—Նմանություններ և ընդհանուր կետեր արևելյան հին մյուս եկեղեցիների պատարագների հետ, Ե 16:—Հայոց պատարագի հատկանշական գծերը՝ համեմատված քրիստոնեական մյուս պատարագների հետ ընդհանրապես, Զ 26:
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կենտրոնական կոմիտեի տարեկան նստաշրջանը Ժնևում, Ը—Թ 61:
ԱՄՆ-ի եպիսկոպոսական եկեղեցու ներկայացուցիչները Մայր Աթոռում, Ը—Թ 61:

ԺԱ. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Թեմական պատգամավորական ընտրություններ եգիպտահայ տիրախնամ թեմում, Ա 52:
Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանի խոսքը՝ իր դոկտորական թեզի պաշտպանության ժամանակ, Բ 43:
ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի հոգևորականաց տարեկան համագումարը, Զ 33:
1975—1976 տարեկան տեղեկագիր Երուսաղեմի սրբոց Թարգմանչաց երկրորդական վարժարանի, Ը—Թ 44:

ԺԲ. ԳՐԱԿԱՆ

Հատվածներ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպից, Բ 12:
ԵՂԻԱ (ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ)—Կեդրոնականի շրջանավարտ մը, Դ 48:

ԺԳ. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Հերոսական (Խոսք՝ Եղիվարդի, երաժշտությունը՝ Արսեն եպիսկոպոս Բերբերյանի: Նոտա), Զ 84:

ԺԴ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԱՋԱՆՅԱՆ Խ.—«Էջմիածին» ամսագրի մատենագիտական ցանկը, ԺԲ 52:

ԱՅՎԱԶՅԱՆ Ա. Ա.—Աբրակունիսի սուրբ Կարապետ վանքը, Է 45:

ԱՆԱՍՅԱՆ Հ. Ս.—Մի նորահայտ մեռոներգություն ևս, Ժ—ԺԱ 106:

ԲԱՐԹԻԿՅԱՆ Հ. Մ.—Մամիկոնյան (՞) սուրբ Մարիամ Նորավկայի (+902—903 թթ.) բյուզանդական վարքը, Ա 42, Բ 52:

ԹԱՀՄԻԶՅԱՆ Ն.—Անանիա Նարեկացու և Նարեկա վանքի երաժշտական ավանդույթների մասին, Ը—Թ 29:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ Ա.—Մոլդավիայի հայաբնակ օջախները և նրանց հայկական արձանագրությունները, Ե 53:

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ—Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականը, Ա 25: — Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» և «Արիացեալք» հայրենասիրական շարականները, Բ 8: — Սահակ Զորափորեցի, Գ 41: — Բարսեղ վարդապետ Ճոն, Է 16: — 8-րդ դարի շարականագիրները, Ը—Թ 25:

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՎԱՐԴ—Մատենադարանի № 4813 Ավետարանը, Է 31:

ՀԱՋՅԱՆ Լ.—Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը Ի. Ա. Կոիլովի առակների թարգմանիչ, Ա 36:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ—Մայր Աթոռ ս. Էջմիածնի շինարարական գործունեությունը ԺԹ դարում և Ի դարի սկզբին, Ե 34: — Մայր տաճարի պահպանության ուղղությամբ կատարված ջանքեր, Զ 38, Է 21:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ա. Ս.—Երկու արժեքավոր ձեռագրեր ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին, ԺԲ 45:

ՄԿՐՏՉՅԱՆ Ծ. Մ.—Մարտակերտի շրջանի պատմական հուշարձանները, Բ 45, Գ 48: — Մարտունու շրջանի պատմական հուշարձանները, Զ 56, Է 53: — Ստեփանակերտի շրջանի պատմական հուշարձանները, Ը—Թ 46:

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ—Մայր Աթոռի դրամագիտական ժողովածուն, Զ 45, Է 37:

ՆԵՐՍԵՍՅԱՆ-ՓԱՆԻԿՅԱՆ ՀԵՂԻՆԵ—Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիք»-ը, Է 26:

ՍԱՂՈՒՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ—Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը, Ե 25:

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՍՐԿ.—Սուրբ պատարագի խորհուրդը. Բ 35: — Արևմտյան ամսագրերում հայագիտական ուսումնասիրությունների մատենագիտական ցուցակ, Ե 51:

ՎԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ—Հովհաննես Վանականը և Խորանաշատ վանքը, Ը—Թ 38:

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Ա.—Ագաթանգեղոսի պատմության Անտոն Բոնուկկիի մշակումը և նրա արաբերեն համառոտ թարգմանությունը, Ե 45:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ. Հ.—Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախօրինակը, Ը—Թ 22:

ՌԻՎՈՒԲԱԲՅԱՆ ԲԱԳՐԱՏ—Հայոց եկեղեցու Աղվանից թևի սկզբնավորման հարցը, Դ 57, Ե 38:

ՓԱՀՉՄՅԱՆ ՍԱՐԳԻՍ—Հայ զորականներ և զինվորներ Ցար Քրումի բանակին մեջ, Բ 58:

ԺԵ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եղնիկ վարդապետ Պետրոսյան, Ա 50:

ՎԱՀԵ ՉԵՐՉԻՅԱՆ—Գևորգ ծ. վրդ. Ռուսճուքլյան, Գ 53:

ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ—Հայ խոշորագույն լեզվաբանը, Դ 50:

Ա. Հ.—Ծայրագույն վարդապետական իշխանության տվչություն, Է 10: — Աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան, Է 12: — Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի կենսագրությունը, Ը—Թ 3:

Գերաշնորհ տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան, Ժ—ԺԱ 103:

Գերաշնորհ տ. Դավիթ եպիսկոպոս Սահակյան, Ժ—ԺԱ 104:

Տ. Հակոբ արեղա Գրիգորյան, Ժ—ԺԱ 111:

ԺԶ. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ.—«Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թադիադեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ Էջմիածնի ի Հայս» (գրախոսություն), Ա 31: — «Հայ եկեղեցու պատարագն արևելյան մյուս եկեղեցիների ծիսական արարողությունների համեմատությամբ» (գրախոսություն), Բ 41: —Եղիվարդ (Եղիշե պատրիարք Տերտերյան), «Հեթանոսաց Առաքյալը» (գրախոսություն), Դ 40:

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, Բ 59, Գ 55, Դ 62, Ե 60, Է 59, Ը—Թ 63, ԺԲ 59:

ԺԷ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ արժանապատիվ տ. Թորոս ավագ քահանա Մանառյանի, Գ 61:

Հանգիստ արժանապատիվ տ. Ոսկան քահանա Շիրվանյանի, Գ 63:

Ա. Հ.—Մահ հնագետ Կարո Ղաֆադարյանի, ԺԲ 55: Մահ Կամսար Ավետիսյանի, ԺԲ 57:

Ж196

ԼԳ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1976







ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Փոխան գրախոսականի 3
Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գրիգոր Ա. Արզումանյանի մահվան տխուր առիթով 16
ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ—Խոսք մեր ժողովրդին 17
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Նորին Գերազանցություն կարդինալ Ժան Վիլլեբրանդսին 19
Հայտարարություն 22
Լուսաբանություն 23
Վեհափառ Հայրապետի այցելությունը Շիրակի թեմ 24
Վիլյամ Սարոյանը Մայր Աթոռում 40
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 42
Հայրապետական գնահատություն 44
Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Երկու. սարժեքավոր ձեռագրեր ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին 45
Խ. ԱՂԱՋԱՆՅԱՆ—«Էջմիածին» ամսագրի մատենագիտական ցանկը 52
Ա. Հ.—Մահ հնագետ Կարո Ղաֆադարյանի 55
Մահ Կամսար Ավետիսյանի 57
Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 59
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1976 թվականի ընթացքում տպագրված նյութերի . 60

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 29.11.1976 թ.: Ստորագրված է տպագրության 12.1.1977 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 927:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1976 թ.